

**«ԱՅՆ, ԻՆՉ ՈՒՂՂՎԱԾ Է ԱԶԳԱՅԻՆԻ ԴԵՄ,
ՈՒՂՂՎԱԾ Է ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ»**

(հարցազրույց ԶԳԿ նախագահի տեղակալ Մ. Լալայանի հետ)

Չարդ – Ազգայնականությունը ԶԳԿ գաղափարախոսական մոտեցումներում առանցքային տեղ է գրավում: Սակայն այսօր ազգայնականությունը միանշանակ ընկալում չունի: Ինչպիսի՞ն են ազգայնականության ԶԳԿ ընկալումները:

Պատ. – Նախ ասենք, որ հասարակական գիտության կողմից առայսօր չի տրված ազգայնականության միասնական, ընդունված սահմանում. կա շփոթ՝ ազգային, ազգայնականության եւ ազգայնամոլության: Մենք, հետեւելով հայ ազգայնականության դասական մոտեցումներին, նույնացնում ենք «ազգային» եւ «ազգայնական» հասկացությունները (պատահական չէ, որ արեւմտահայերենում դրանք նույնիմաստ են), միաժամանակ մերժում ազգայնամոլությունը, ինչպես ամեն մի մոլություն: Ըստ այդմ, ազգայնականությունը (նացիոնալիզմ)՝ իբրեւ զգացում, մտածում եւ գործելակերպ, որեւէ ազգի արդար եւ բնական ձգտումն է հավատարիմ մնալ սեփական կենսածեւին եւ հարատեւել իր հայրենիքում՝ առանց ուրիշի հայրենիքի վրա աչք ունենալու, առանց ուրիշին իր կենսակերպը պարտադրելու, այսինքն՝ առանց ազգերի ներդաշնակ գոյակցության բնական-արարչական կարգը խախտելու: Ազգայնականությունն, ուրեմն, ինքնին թելադրված է ազգերի գոյությամբ եւ որպես այդպիսին՝ հավիտենական արժեք է:

Այս ձեւակերպմամբ, ազգայնականությանն անհարիր են այլամերժությունը, օտարատյացությունը, անբնական ծավալապաշտությունը, որը հատուկ է ազգայնամոլությանը (շովինիզմ): Մեզանում, ցավալիորեն, դեռեւս ընդունված է ազգայնականությունը գնահատել արեւմտյան ինչ-ինչ չափանիշներով կամ նախկին՝ կոմունիստական ըմբռնումներով եւ այն ներկայացնել իբրեւ ծայրահեղականություն, ազգայնամոլություն: Այսօր էլ մեր գիտնականների, պետական ու քաղաքական գործիչների զգալի մասը ազգայնականությունը գնահատում է այլ երկրների այն քաղաքական հոսանքների օրինակով, որոնք իբրեւ հեմարան օգտագործում են հասարակության անգիտակից եւ խաժամուժ (լյումպեն) տարրերը. երբեք ի ցույց չեն դրվում այդ երկրների ազգայնական առողջ ուժերը: Գրեթե ուրացության են մատնվում բուն հայ ազգայնականության պատմությունը,

արդեն ձեւակերպված գաղափարաբանությունները, այն ներկայացնող անհատների հզոր իմացականությունը:

Կարծիք կա, որ ազգայնականությունն այսօր մեզանում հող չի կարող ունենալ, քանզի Հայաստանն էթնիկապես գրեթե միատարր է: Սա, անշուշտ, ազգայնականության էությունը չընկալելու եւ այն ստվերոտ կողմերով տեսնելու արդյունք է: Ազգայնականությունը, ինչպես վերը նշեցինք, տվյալ ազգի՝ իր հայրենիքում հարատեւելու եւ սեփական արժեքներին հավատարիմ մնալու, դրանք զարգացնելու խնդիրն ունի: Ըստ այդմ, անկախ այն բանից՝ Հայաստանն էթնիկապես միատարր է, թե ոչ, միեւնույն է, մեզ համար գոյություն ունի Հայրենիքի ամբողջական վերատիրման եւ մեզանում Հայկական արժեհամակարգի հաստատման խնդիր:

Հայաստան պետությունը ստեղծված է Հայ ազգի իղծերի իրականացման համար, հետեւաբար Հայաստանի պետական քաղաքականությունը պետք է խորքում լինի ազգային-հայկական, ասել է՝ բովանդակությամբ ազգայնական:

Հարց – Այսօր աշխարհում ընդունված գաղափարախոսական ուղղություններից ո՞րն է առավել համահունչ ՀՀ գաղափարախոսությանը:

Պատ. – Ժամանակակից աշխարհում ընդունված գաղափարախոսական ուղղություններից ՀՀ գաղափարաբանությանն էապես մոտ է դասական պահպանողականությունը: Այս առումով ՀՀ-ն ազգային պահպանողական կուսակցություն է:

Ընդհանրապես, «պահպանողականություն»՝ ասել է մարդկության կողմից դրականորեն գնահատված եւ պատմականորեն արդարացված հիմնարար արժեքների, բարոյական նորմերի պահպանում: Այս իմաստով՝ դասական պահպանողականության հիմքում ընկած մի շարք առանցքային հասկացություններ, դրույթներ մեզ համար սկզբունքորեն ընդունելի են: Օրինակ, Աստված, ազգ, հայրենիք, ավանդական ընտանիք, բարոյական նորմերի հաստատում համակարգ եւ այլն:

Մեզ համար ընդունելի է պահպանողականության կողմից նախապատվություն տալը մնայունին, հավիտենականին՝ ի հաշիվ անցողիկի, ժամանակավորի, մտածելակերպի կոնկրետությանը՝ համեմատ վերացականությունների: Ընդունելի է նաեւ դասական պահպանողականության այն հիմնարար մոտեցումը, թե հասարակության բարեւավումը պետք է իրականացվի անընդհատ, մասնակի եւ փուլային բարեփոխումների ճանապարհով, եւ ցանկացած բարեփոխում պետք է համապատասխանի հասարակության ավանդական արժեհամակարգին: Պահպանողականու-

թյան հիմնարար արժեքներից են նաեւ մասնավոր սեփականությունը եւ տնտեսական ազատականությունը, որոնք նույնպես մեզ համար արժեւորվում են:

Չարդ–ՅՅԿ գաղափարախոսության հիմքում ընկած է Գարեգին Նժդեհի Ցեղակրոն ուսմունքը: Արդյո՞ք դա չի նեղացնում կուսակցության գաղափարախոսական դաշտը:

Պատ.–Ծիշտ կլինի ասել, որ ՅՅԿ գաղափարախոսության հիմքում ընկած է ընդհանրապես Գարեգին Նժդեհի ուսմունքը, որում, իհարկե, Ցեղակրոնությունը առանցքային տեղ ունի: Եվ պիտի ասել, որ Նժդեհի ուսմունքի համամարդկային արժեքը պակաս կարելոր չէ, քան զուտ ազգայինը: Եվ եթե մենք կարողանանք Նժդեհին եւ նրա ուսմունքը ներկայացնել աշխարհին նաեւ իբրեւ համամարդկային արժեք, ապա, վստահաբար, նա մի օր արժանի տեղ կգրավի աշխարհի մեծերի շարքում: Այնպես որ՝ Նժդեհի ուսմունքը կուսակցության գաղափարախոսական դաշտը ոչ միայն չի նեղացնում, այլեւ էապես ընդլայնում է՝ ազգայինը հաղորդակից դարձնելով համամարդկային հավիտենաարժեք գաղափարների:

Չարդ–Այսօրվա համաշխարհայնացման (գլոբալացման) գործընթացները լուրջ մարտահրավեր են ազգային ինքնությանը: Ինչպե՞ս է ՅՅԿ գաղափարախոսությունը մեկնաբանում ազգայինի եւ համամարդկայինի համադրման խնդիրը:

Պատ.–Բնության բազմազանությունը, տեսակավորումը գոյություն ունեն ի սկզբանե: Ինքնին վերացական մարդկություն գոյություն չունի. մարդկությունը կազմում են ազգերը, եւ ամեն մարդ իր ազգությամբ մտնում է ընդհանուր մարդկության մեջ: Յուրաքանչյուր ազգ իր հոգեկերտվածքով ինքնատիպ է եւ անկրկնելի: Մարդկությունը հարուստ է ազգերով, եւ որեւէ ազգի կորստով այն աղքատանում է՝ կորցնելով զգալու, մտածելու եւ արտահայտվելու մի յուրահատուկ բնական ձեւ, մի առանձին հոգեաշխարհ: Յետեւաբար, այն, ինչ ուղղված է ազգայինի դեմ, ուղղված է մարդկության դեմ:

Անշուշտ, ազգային ինքնատիպությունը չի ենթադրում աշխարհից մեկուսացում կամ ազգային եսականություն: Ազգերը, բացի առանձնահատկություններից, ունեն նաեւ ընդհանրական հատկանիշներ: Դրանք ակնառու են Աստծո հետ հարաբերությունները ճշտելիս (պատահական չի ասված, թե բոլոր ճշմարիտ կրոնները տանում են դեպի միեւնույն Աստված), ինչպես նաեւ՝ հասարակարգերի, տնտեսածեւերի եւ գիտու-

թյան հանդեպ մոտեցումներում: Սակայն այս բոլորն էլ իրենց վրա այս կամ այն չափով կրում են տվյալ ազգի կնիքը: Ըստ այդմ, յուրաքանչյուր ազգ ունի իր քրիստոնեությունը կամ իր սոցիալիզմը, կարելի է ավելացնել նաև՝ իրեն հատուկ լիբերալիզմը, իր ընկալումներին համապատասխան դեմոկրատիան են:

Այսպիսով, թեև բոլոր ազգերը՝ իբրև Արարչի ստեղծագործություն, Հավերժի եւ Բացարձակի հարթության մեջ մերձենում են, սակայն յուրաքանչյուրն ունի դեպի Արարիչ տանող իր ճանապարհը, իսկ ավելի ստույգ՝ իրեն տրված ճանապարհը: Սա՛ է ազգերի ներդաշնակ գոյակցության բնական-արարչական կարգը: Դա ասել է նաև, թե յուրաքանչյուր ազգային միայն կատարելության ճանապարհով է դառնում համամարդկային:

Ազգային ինքնատիպությունը, թե՞ համաշխարհային միօրինակացում. այս հարցը վերստին դրված է մարդկության առաջ: Միօրինակություն քարոզող տեսությունների եւ դրանց հետեւում կանգնած ուժերի խնդիրն ակնհայտ է. շահարկելով ինտեգրացիայի բնական գործընթացները՝ բոլոր ազգերին պարտադրել միօրինակ բարքեր, միօրինակ մշակույթ, մտածելակերպ, հասարակարգ, տնտեսածեւ, կարճ ասած՝ աշխարհաքաղաքացու համընդհանուր կենսակերպ:

Ազգերի մշակութային մերձեցում (բայց ո՛չ ձուլում), գիտատեխնիկական, տնտեսական միավորում (եւ ո՛չ մեկուսացում), այսինքն՝ հոգեւոր-մշակութային ինքնատիպություն եւ քաղաքակրթական ընդհանրություն. այսպես ենք մենք հասկանում աշխարհի բնական կարգը, այսպիսին է ազգայինի եւ համամարդկայինի մեր ընկալումը:

Հարց—ՀՀԿ գաղափարաբանությունում առանցքային տեղ ունեն «ազգային գաղափարախոսություն» եւ «ազգի գերնպատակ-առաքելություն» հասկացությունները: Ինչպե՞ս կմեկնաբանեք դրանք:

Պատ.—Յուրաքանչյուր կենսունակ՝ իր առաքելության գիտակցումն ունեցող ազգ, ելնելով սեփական աշխարհընկալումից, սահմանում է իր արժեքների համակարգը, նպատակներն ու իղծերը, նախանշում իր հարատեւման ռազմավարությունը, որոնց տեսաբանված ամբողջությունը հանդես է գալիս իբրև տվյալ ազգի գաղափարախոսություն: Այն նրա համար դառնում է մի տեսակ Ավետարան, որով նա առաջնորդվում է իր գոյության ընթացքում: Առանց այդ գաղափարախոսության՝ որեւէ ազգ կենսունակ չէ ազգերի գոյության պայքարում: Առանց դրա՝ նա դառնում է պատեհապաշտ՝ գործելակերպի մեջ անսկզբունք, նպատակի եւ անելիքի մեջ չկողմնորոշվող եւ, հաճախ, իբրև դեպքերի խաղալիք, դուրս է մնում

պատմության ասպարեզից. վկա՝ ազգերի գոյապայքարը: Այդ է ցույց տալիս նաեւ մեր պատմությունը, որի արյունոտ ու արցունքոտ էջերից շատերն արդյունք են սեփական գաղափարախոսության բացակայության եւ օտար արժեքների, ուսմունքների ազդեցության:

Մեր կարծիքով, Ազգային գաղափարախոսությունը՝ իբրեւ ազգային գաղափարների համակարգ, իբրեւ Ազգի առաքելության իմաստաբանություն, գոյություն ունի ի սկզբանե, Ազգի ծնունդի հետ, եւ խնդիրը ո՛չ թե այն ստեղծելը, այլ՝ ճանաչելը, հայտնագործելն է:

Այդուհանդերձ, Ազգային գաղափարախոսությունը մեկ ամբողջական փաստաթուղթ չէ եւ ներառում է գաղափարական մի շարք համակարգեր, որոնք թեւ ժամանակների ու շոշափվող հարթությունների առումով տարբեր են, բայց էաբանորեն նույնն են: Հայկական գաղափարախոսության մեջ առկա են եւ Այբուբենը, եւ Էպոսը, եւ հայոց Աստվածաճանաչողությունը, եւ Ցեղակրոնությունը, եւ Տարոնականությունը... Եւ ապագայում ստեղծվելիք արժեքավորը, որոնք ունենալով իրենց ուրույն տեղը գաղափարախոսության մեջ՝ ամբողջացնում են այն:

Մեզանում հաճախ է խոսվում Ազգային գաղափարախոսության՝ կեղծ կամ իրական կատեգորիա լինելու մասին: Ազգային գաղափարախոսությունը կեղծ հռչակողները, թերեւս, ելնում են նրանից, թե չի՞ կարող լինել մեկ, միասնական գաղափարախոսություն հայության բոլոր անդամների կամ հատվածների (իմա՝ հայ ժողովրդի) համար: Մենք էլ ենք պնդում, որ չկա՝ համընդհանուր գաղափարախոսություն բոլոր հայ կոչվողների (օրինակ՝ ազգասերի ու ազգադավի, աշխատավորի եւ թալանչիի) համար: Բայց անպայմանորեն կան ընդհանրական գաղափարներ եւ արժեքներ (Հայրենիք, Անկախություն, Լեզու, Մշակույթ եւ այլն) բոլոր այն հայորդիների համար, որոնք շատ թե քիչ պարտավորվածություն են զգում Ազգի եւ Հայրենիքի հանդեպ: Իսկ Ազգային գաղափարախոսությունը, մեկ այլ ձեւակերպմամբ, այդ ընդհանրական՝ Ազգի անդամներին իրար հոգեպես կամ գիտակցորեն կապող, շղկապող գաղափարների ու արժեքների համակարգն է: Թյուրիմացությունն այն է (եթե, իհարկե, միտումնավոր չէ), որ «Հայ ազգ»-ի մեջ ոմանք ներառում են բոլոր հայանուններին (իրականում նկատի ունենալով հայ ժողովուրդը), իսկ մենք՝ հայ մնալ կամեցողներին, հայորեն ապրել ձգտողներին (այսինքն՝ հայ ազգը):

Հասկանալի է, որ ազգային գաղափարախոսությունը պիտի բխի սեփական առաքելության գիտակցմամբ սահմանված՝ ազգային գերնպատակից, տեսլականից:

Հայոց գերնպատակ-առաքելությունը մենք հասկանում եւ սահմանում ենք այսպես. սեփական Ոգու անընդհատ զարգացմամբ եւ Հայաստանում

Հայ ցեղի հավիտենության ապահովմամբ՝ Բացարձակին ու Հավերժին, որ է՝ Արարչին մերձենալը:

Սա մեր նախասահմանված առաքելությունն է, որ տրված է ի սկզբանե:

Կա սակայն մի այլ առաքելություն եւս, որ ստանձնում ես կամովին, երբ տեսնում ես աշխարհի աստվածային-բնական կարգը խախտված:

Նենգ կամքի կրողները միշտ էլ ուզում են աշխարհին տեր լինել, այսինքն՝ աշխարհին տիրել՝ իրենց անբնական կարգը պարտադրել-հաստատելով: Այնինչ հարկ է աշխարհին տիրություն անել՝ աստվածային-բնական կարգը պահպանել-հաստատելով. կարգ, որում յուրաքանչյուր ազգ՝ իր բնական հոգեմտավոր կերպին համապատասխան, իր ավանդն է բերում մարդկության ընդհանուր գործին, նպատակներին:

Համաշխարհային այդ առաքելությունն իրագործելի է, երբ կա զինակցությունը բոլոր նրանց, ովքեր հոգեւորն ու մարդկայինը պահելու եւ ազգերի ներդաշնակ բազմազանությունն ապահովելու մտահոգությամբ՝ պատրաստ են մաքառելու հանուն ճշմարիտ արժեհամակարգի եւ աշխարհակարգի հաստատման:

Մի դեպքում մենք պատասխանատու ենք միայն մեզ համար, մյուս դեպքում՝ բոլորի:

Հարց – Ինչպիսի՞ն են ՀՀԿ գաղափարախոսական մոտեցումները սփյուռքի հայապահպանման հետ կապված խնդիրներում:

Պատ. – Ո՞րն է սփյուռքի հայրեն գոյատևելու իմաստը կամ՝ ի՞նչ է սփյուռքի կորուստը հայության համար: Սրանք հարցադրումներ են, որոնք պատասխանների կարիք ունեն հատկապես մեր օրերում, երբ սփյուռքի ծուլման աննախադեպ տեմպերը աչքի առաջ են, իսկ շատ սփյուռքահայեր իրենց հարց են տալիս, թե ինչու պիտի օտար միջավայրում դպրոց, եկեղեցի պահեն, այլազգիների հետ չխառնվեն, երբ այդ ամենը այլոց շրջապատում դժվարացնում է իրենց կյանքը, անձնական բարեկեցության խնդիրը:

Մենք ասում ենք. գաղթաշխարհի հայապահպանումն ունի միայն մեկ նպատակ՝ Հայաստան վերադառնալ որպես հայեր, այսինքն՝ հայ մնալ մինչեւ հայրենադարձություն:

Սփյուռքը հավիտենորեն հայ մնալու միայն մեկ ճանապարհ ունի՝ վերադարձ իր նախահայրերի սրբազան հողը. հակառակ դեպքում՝ նա դատապարտված է՝ աստիճանական ուժացումի ճանապարհով, պատմության ասպարեզից հեռանալու: Անշուշտ, սփյուռքի կորուստը մեզ համար նաեւ քանակական կորուստ է, բայց առավելապես՝ որակական, ասել է թե՛

էության կորուստ: Սփյուռքահայության կորուստը նույնքան սպառնում է մեր էությանը, որքան օտարի կողմից նվաճված Արեւմտահայաստանի կորուստը: Եվ հայրենաբնակ հայության կապը սփյուռքահայության հետ մեզ համար առաջին հերթին էական կապ է:

Կորսված հայրենիք տենչալով՝ մենք ոչ թե բաղձում ենք տնտեսական կամ այլ կարգի շահավետություն, այլ՝ նախ եւ առաջ աղճատված էության ամբողջացում. սփյուռքահայություն կորցնելով՝ մենք վերստին կորցնում ենք էություն, այն առավել աղճատում:

Եվ այն սփյուռքահայերը, որոնց համար հայ մնալը, հայեցի ապրելը, իրենց սերունդների հայկականորեն դրսեւորվելը կյանքի իմաստ են, իհարկե, նրանք պետք է ձգտեն եւ կծգտեն Չայրենիք վերադառնալ: Եթե այդ զգացումները չկան, գիտակցական այդ դաշտը ձեւավորված չէ, պարզ է, որ մարդն իր բնօրրան չի վերադառնա: Այդօրինակ մարդկանց հետ հարաբերությունները պետք է կառուցել այլ հարթության մեջ՝ ելնելով հայկական գլոբալ համակարգի կայացման անհրաժեշտությունից:

www.hhk.am

**ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ.
ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
Սարգիս Հարությունյան**

Ձարգացումներ Ռամբուլեից հետո

Ռամբուլեում տեղի ունեցած բանակցությունների գլխավոր արդյունքը եղավ այն, որ ԵԱՀԿ Մինսկի խմբից, փաստորեն, առանձնացավ ամերիկյան դիվանագիտությունը: Ռամբուլեի արդյունքները Վաշինգտոնի համար կարծես թե դարձան հարմար փաստարկ՝ հիմնավորելու սեփական միակողմանի քայլերը Ղարաբաղյան հարցում:

2006թ. մարտից մայիս ընկած ժամանակահատվածում Հարավային Կովկաս այցելեցին ԱՄՆ պետքարտուղարությունում Ղարաբաղյան հարցով զբաղվող բոլոր բարձրաստիճան ներկայացուցիչները՝ Քոնդոլիզա Ռայսի եվրոպական ու եվրասիական հարցերով օգնական Դենիել Ֆրիդը, նրա տեղակալ Մեթյու Բրայզան եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Սթիվեն Մանը¹:

Այդ այցելությունների զագաթնակետ, թերեւս, պետք է համարել մայիսի 24-25-ը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ներկայացուցիչների՝ Ռուսաստանի փոխարտգործնախարար Գրիգորի Կարասինի, Դենիել Ֆրիդի եւ Ֆրանսիայի արտգործնախարարության ներկայացուցիչ Պիեր Մորելի, ինչպես նաեւ Մինսկի խմբի համանախագահներ Յուրի Մերզլյակովի (Ռուսաստան), Սթիվեն Մանի (ԱՄՆ) ու Բեռնար Ֆասյեի (Ֆրանսիա) Բաքու եւ Երեւան կատարած այցերը: Ըստ էության, այդ այցերի ժամանակ վերջնականապես հստակեցվեցին միջնորդ կողմերի այն առաջարկությունները, որոնք նախապես քննարկվել էին մայիսի 18-ին Ստրասբուրգում կայացած Օսկանյան – Մամեդյարով

¹ Ընդամենը երեք ամսվա ընթացքում Ֆրիդը եւ Բրայզան տարածաշրջան այցելեցին երկուական անգամ, Մանը՝ երեք: Բացի այդ, նշված ժամանակահատվածում Բաքվում էին նաեւ ԱՄՆ պետքարտուղարության քաղաքական ծրագրավորման բաժնի ղեկավար Սթեֆըն Կրասները եւ պետքարտուղարության առեւտրական ու գործարարական հարցերով հատուկ բանագնաց Ֆրենկ Մերնոլդը: Օրերս հայտնի դարձավ, որ ԵԱՀԿ Մինսկի խմբում Սթիվեն Մանին փոխարինելու է Մեթյու Բրայզան: Հիշեցնենք, որ Մանը հրաժարական էր տվել բուխարեստյան հանդիպումից անմիջապես հետո:

հանդիպման ընթացքում եւ որոնք պետք է ներկայացվեին հունիսի սկզբին Բուխարեստում սպասվող Ռոբերտ Քոչարյան–Իլիամ Ալիե հանդիպմանը:

Ղարաբաղյան հիմնախնդրի կապակցությամբ՝ ԱՄՆ քաղաքականության բնորոշ տարր պետք է համարել նաեւ ամերիկյան «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի հետ մարտի 27-ին Հայաստանի կնքած համաձայնագիրը (որի արդյունքում առաջիկա հինգ տարիներին Երեւանը կարող է ստանալ ավելի քան \$236.5 մլն), ինչպես նաեւ ԱՄՆ պետքարտուղարության՝ աշխարհում թմրամիջոցների ապօրինի շրջանառության վիճակի մասին զեկույցում LՂՀ (որպես տարանցիկ երկիր) մատնանշումը, եւ ավելի ուշ՝ հունիսի 5-ին, ԱՄՆ պետքարտուղարության հրապարակած մարդկանց առետրի (թրաֆիկինգի) հինգերորդ ամենամյա զեկույցում Հայաստանը որպես «սկզբնաղբյուր երկիր» նշելը:

Ռամբուլեից հետո ընկած ժամանակաշրջանում ավելի որոշակի դարձավ այն աջակցությունը, որը եվրոպական դիվանագիտությունը ցույց է տալիս Վաշինգտոնին Ղարաբաղյան իրավիճակի փոփոխության գործում: Մասնավորապես, դրա օգտին են խոսում փետրվարին տարածաշրջան կատարած Եվրամիության (ԵՄ) արտաքին հարաբերությունների ու եվրոպական քաղաքականության հարցերով հանձնակատար Բենիտո Ֆերերո-Վալդերի այցը, ինչպես նաեւ մարտին եւ մայիսին Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Փիթեր Սեններեի հայտարարությունները, թե Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հանգուցալուծման առումով իր ներկայացրած կառույցը պատրաստ է շրջան ուղարկել խաղաղապահ առաքելություն, ինչպես եւ՝ նպաստել հետկոնֆլիկտային իրավիճակի կարգավորմանը:

Նույն համատեքստում պետք է դիտարկել 2006թ. ապրիլի 11-13-ը Բեռնար Ֆասյեի այցերը Բաքու ու Երեւան, մայիսի 4-ին Վիլնյուսում ԵՄ արտաքին ու անվտանգության քաղաքականության գծով հանձնակատար Խավիեր Սոլանայի հայտարարությունը («ԵՄ-ը շարունակելու է ակտիվորեն մասնակցել Հարավային Կովկասում սառեցված հակամարտությունների հանգուցալուծմանը») եւ, վերջապես, մայիսի 30-ին Փարիզում կայացած Ժակ Շիրակ–Իլիամ Ալիե հանդիպումը:

Ռամբուլեից հետո Ղարաբաղյան հիմնախնդրի հետ կապված հաջորդ կարեւոր տեղաշարժը Ռուսաստանի ազդեցության մեծացումն էր Հայաստանում: Ս.թ. ապրիլի 6-ին Հրազդանի ՋԷԿ-ի հինգերորդ էներգաբլոկի եւ Իրան–Հայաստան գազամուղի հայկական հատվածի հանձնումը Մոսկվային հարկ է դիտարկել նաեւ Ղարաբաղյան հիմնախնդրի համատեքստում: Երեւանի կողմից Մոսկվայի օգտին նման

որոշում կայացնելը կարող էր վկայել Վաշինգտոնի ու Փարիզի հետ ունեցած խնդիրների մասին:

Նույն տրամաբանության ներքո է ընկնում մարտի 13-14-ը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորոյուժայի այցը Երեւան, ինչպես նաեւ ապրիլի 20-ին Հայաստանի մայրաքաղաքում Ռուսաստանի փոխարտգործնախարար Գրիգորի Կարասինի գլխավորությամբ կայացած՝ Թուրքիայում, Վրաստանում, Ադրբեջանում եւ Հայաստանում Ռուսաստանի դեսպանների խորհրդակցությունը:

Միեւնույն ժամանակ, սակայն, Ռուսաստանը լուրջ փորձեր կատարեց ընթացող զարգացումների համատեքստում մեծացնել իր ազդեցությունը Ադրբեջանում: Ս.թ. փետրվարի 21-22-ը Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինի եւ մայիսի 30-31-ը պաշտպանության նախարար Ս. Իվանովի այցերը Բաքու եւ այնտեղ արված հայտարարությունները վկայում են միայն այդ մասին:

Ընդհանուր առմամբ, բուխարեստյան հանդիպումից առաջ պահպանվում էր աշխարհաքաղաքական այն տրամաբանությունը, որն առկա էր Ռամբուլեի նախօրեին՝ Ղարաբաղյան հիմնախնդրում իրավիճակը փոխելու ամերիկա-եվրոպական նախաձեռնությանը զուգահեռ հանդես էին գալիս status quo-ն նույնը պահելուն միտված Մոսկվայի եւ Թեհրանի քաղաքականությունները:

Բուխարեստյան հանդիպում. դիտարկումներ

Ինչ վերաբերում է բուխարեստյան հանդիպման «ակնկալիքներին», ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ղարաբաղյան բանակցությունների ներկայիս ակտիվացման հիմնական նպատակը հարավկովկասյան status quo-ի փոփոխությունն է՝ քիչ հավանական էր, որ մինչեւ հուլիսին Սանկտ Պետերբուրգում կայանալիք «Մեծ ութնյակի» զագաթաժողով որեւէ լուրջ տեղաշարժ գրանցվեր տարածաշրջանային փոխդասավորվածությունում:

Այդ առումով՝ գլխավոր ցուցիչն իրանական հարցն է: Վիեննայում կայացած «վեցնյակի» հանդիպումից եւ իրանական կողմին ներկայացված առաջարկությունների փաթեթից հետո, փոքր է հավանականությունը, որ ընդհանուր զարգացումների համատեքստում նաեւ այդ հարցի առնչությամբ որեւէ կոնկրետ փոխհամաձայնություն ձեռք բերվի մինչեւ պետերբուրգյան զագաթաժողով:

Բնականաբար, թե՛ հայկական եւ թե՛ ադրբեջանական կողմերի համար

պարզապես ձեռնտու չէր աննախադեպ պայմանավորվածությունների միջոցով որոշակիացնել իրենց դիրքորոշումը տարածաշրջանային զարգացումներում, երբ անհայտ են պետերբուրգյան հանդիպումների արդյունքները:

Երկրորդ՝ գաղտնիք չէ, որ հատկապես ադրբեջանական կողմը մեծ հույսեր էր կապում անցած ապրիլի 28-ին Վաշինգտոնում կայացած Բուշ-Ալիև հանդիպման հետ: Սակայն իրականում չպետք է բացառել այն հանգամանքը, որ առավելագույնը, ինչ ստացել էր Ալիևն այդ հանդիպումից, հենց հանդիպման փաստն էր: Այլ պարագաներում նմանատիպ մի հանդիպում պարզապես չէր էլ կարող լինել՝ հաշվի առնելով 2003թ. հոկտեմբերին եւ 2005թ. նոյեմբերին Ադրբեջանում կայացած համապետական երկու ընտրությունները, որոնց արդյունքում իշխանությունը Ալիև-ավագից փոխանցվեց որդուն՝ Իլհամին: Հետեւաբար, Բուշի վարչակազմի իրական գիշումը Ալիև-կրտսերին (օրինակ, իրանական հարցի դիմաց) կարող է կայանալ զուտ հանդիպման (այսինքն՝ Իլհամի լեգիտիմացման) փաստի մեջ: Մի հանդիպում, որի պատճառով եւս մեկ անգամ անտեսվեց Բուշի դոկտրինի հիմնական տարրը՝ «Ժողովրդավարության տարածումը ողջ աշխարհով» եւ որի արդյունքում Սպիտակ տունը հայտնվեց Կոնգրեսի սուր քննադատության ներքո:

Այդ իմաստով, կարելի է կարծել, որ ամերիկյան ու եվրոպական դիվանագիտությունների նախաձեռնությամբ Ռամբույեում եւ Բուխարեստում կայացած հայ-ադրբեջանական բարձր մակարդակի քննարկումների՝ այս ժամանակահատվածի կտրվածքով առաջնային նպատակն էր հուլիսի կեսերին Սանկտ Պետերբուրգում կայանալիք «Մեծ ութնյակի» հանդիպումից առաջ Ռուսաստանի նկատմամբ ճնշում բանեցնելը: Սակայն, մյուս կողմից, անցած կես տարում Վաշինգտոնը կարող էր ամրագրած լինել մի շատ էական հանգամանք՝ ցանկացած ճնշում Երեւանի ու Բաքվի ուղղությամբ միայն մեծացնում է Մոսկվայի դերակատարությունը Հարավային Կովկասում:

Չեռանկարներ

Չեռանկարների առումով, որպես առաջնային կարելության հանգամանք պետք է առանձնացնել «Մեծ ութնյակի» առաջիկա գազաթափողվից հետո ստեղծվող իրավիճակը: Ապրիլ-մայիս ժամանակահատվածում իրանական հարցի, ռուս-ամերիկյան եւ չին-ամերիկյան հարաբերություններում նկատված՝ վերջին տարիների կտրվածքով

աննախադեպ լարվածությունից հետո, ներկայումս միջազգային նշանակության մի շարք հարցերի առնչությամբ ընթանում են նախակոնսենսուսային զարգացումներ. ամերիկա-իրանական հավանական պայմանավորվածությունը, ԱՄՆ կողմից իրաքյան կամպանիայի ռազմավարության վերանայումը, իրավիճակի անորոշությունը Ուկրաինայում, Ղազախստանի շուրջ ընթացող զարգացումները (այդ երկրի էներգակիրների արտահանման խնդիրն ու աշխարհաքաղաքական կողմնորոշման հարցում միմյանց հնարավորինս հավասարակշռող տարրերի երեւան գալը) եւն:

Պետերբուրգյան գագաթաժողովը փորձելու է գտնել որոշակի հարցերի առնվազն միջնաժամկետ պատասխանները: Սակայն Սանկտ Պետերբուրգում կայանալիք քննարկումների ցանկացած ելք կարող է ուղղակիորեն անդրադառնալ հարավկովկասյան աշխարհաքաղաքական փոխդասավորվածության տրամաբանության, հետեւաբար՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ առկա իրավիճակի վրա:

Ղարաբաղյան հիմնախնդրի առումով՝ հաջորդ կարելու գործոնը տարածաշրջանային մի շարք գործընթացների հեռանկարն է: Այդ տեսակետից՝ հատկապես կարելություն են ներկայացնում ռուսադրբեջանական հարաբերություններում նկատվող զարգացումները, Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ լարվածության հավանական մեծացումը: Եվ վերջապես, ուշադրություն է գրավում Ղարաբաղի շուրջ զարգացումներում Թուրքիայի «պասիվ» դերակատարությունը. այդ առումով, թերեւս, պետք է սպասել Անկարա – Երեւան հարաբերություններում նոր տարրերի ի հայտ գալուն:

**ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄՆԵՐ.
ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄ
Գազիկ Տեր-Յարությունյան**

Այսօր աշխարհում ձեւավորել է մի իրավիճակ, երբ աշխարհաքաղաքական խոշոր դերակատարները սկսել են հետխորհրդային պետություններից պահանջել՝ որոշակիություն մտցնել իրենց արտաքին կողմնորոշումներում, ինչի արդյունքում այդ երկրները հայտնվում են բարդ ընտրության առաջ. մինչ այդ նրանք ձեռք են բերել բազմակողմանի պայմանավորվածություններ, որոնցից հրաժարվելը կարող է հանգեցնել լուրջ խնդիրների:

Այդպիսի իրավիճակում է հայտնվել նաեւ ՀՀ-ն, որտեղ վերջին ժամանակահատվածում կտրուկ աճել է Ռուսաստանի ազդեցությունը: Արտաքին քաղաքականությունում դա, մասնավորապես, արտահայտվում է Ղարաբաղի խնդրում Հայաստանի ավելի կոշտ կեցվածքով, ինչը, թերեւս, պետք է պայմանավորել ռուսաստանյան կողմի տված ինչ-ինչ երաշխիքներով (վերջինիս մասին է անուղղակիորեն վկայում Սերգեյ Իվանովի հայտարարությունը Բաքվում, որտեղ նա շեշտեց «դրսի ճնշումների անթույլատրելիությունը» ԼՂՀ խնդրում եւ չժխտեց ռուս խաղաղապահների հնարավոր մուտքը հակամարտության գոտի): Ներկա պահին Ռուսաստանի դիրքորոշումը կարծես թե համընկնում է մեր շահերին, սակայն պետք է հաշվի առնել, որ ՀՀ-ի նման պահվածքը կարող է հանգեցնել հակասությունների ԱՄՆ-ի հետ. այս տերությունը դեռ չի գիջել գլոբալ առաջատարի իր դիրքերը եւ տիրապետում է բազմաթիվ լծակների միջազգային կյանքի ամենատարբեր ոլորտներում:

ՀՀ ներքին խնդիրներում նույնպես արձանագրվում է ռուսաստանյան ազդեցության աճ: Կարելի է ենթադրել, որ ՕԵԿ-ի հետ կապված վերջին զարգացումներն ինչ-որ չափով պայմանավորված էին ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումներում տեղի ունեցող փոփոխություններով: Տպավորությունն այնպիսին է, թե այսօրվա նորաթուխ քաղաքական միավորումները նույնպես այս կամ այն չափով գտնվում են ռուսաստանյան ազդեցության ներքո: Այդ գործընթացները եւս կարող են խնդիրներ առաջացնել Արեւմուտքի հետ հարաբերություններում:

Վերոհիշյալ խնդիրների համախմբում ավելի հստակ կողմնորոշվելու համար, թերեւս, նպատակահարմար է համառոտ դիտարկել ռազմա-քաղաքական իրադրությունը Եվրասիական տարածքում եւ դրա հիման վրա փորձել կանխատեսել ապագա հնարավոր զարգացումները:

Գործընթացներ Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) ձեւաչափում

Յունիսի 15-ին Շանհայում տեղի ունեցավ ՇՀԿ հորեյրանական (լրացավ կազմակերպության 5-ամյակը) գագաթաժողովը: Յանդիպման ընթացքում ստորագրվեցին մոտ 10 փաստաթուղթ՝ ԵվրԱզԵՍ-ի, Յավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության, Ասիական-խաղաղօվկիանոսյան համագործակցության քարտուղարության եւ այլ միջազգային կազմակերպությունների հետ: Ստացվեց նաեւ ՇՀԿ Գլխավոր քարտուղարի պաշտոն, որն ամենայն հավանակա-նությամբ կգրավի Ղազախստանի ներկայացուցիչը:

Գագաթաժողովի օրակարգում դրված էր նաեւ ՇՀԿ անդամակ-ցության հետ կապված խնդիրը: Այսօր ՇՀԿ դիտորդի կարգավիճակ են հայցում Աֆղանստանը, Բելառուսը եւ Շրի Լանկան, իսկ Իրանը եւ Պակիստանը հայտ են ներկայացրել, որպեսզի դիտորդից վերածվեն կազմակերպության լիիրավ անդամի: Նկատենք, որ ՇՀԿ-ում գոյություն չունի որեւէ նորմատիվ փաստաթուղթ, համաձայն որի՝ կատարվում է այս կամ այն երկրի անդամագրումը, եւ նման հարցերը լուծվում են կողմերի կոնսենսուսի հիման վրա: Այդ համատեքստում բնորոշ է, որ դեռեւս մայիսին ՇՀԿ ԱԳ նախարարների հանդիպման ժամանակ նշվել է, թե վտանգավոր է արհեստականորեն ընդլայնել լիիրավ անդամների ցանկը, քանի որ դա կարող է փոխել կազմակերպության նպատակա-ուղղվածությունը: Փորձագետներն այս կապակցությամբ նկատում են, որ, օրինակ, ԱՄՆ-ը նույն Պակիստանի միջոցով (եթե վերջինս դառնա լիիրավ անդամ) կփորձի «շեղել» ՇՀԿ գործունեությունը:

Այդ առումով, թվում է, թե ՇՀԿ լիիրավ անդամ դառնալու ավելի շատ հնարավորություններ ունեն Իրանը, որն այժմ ունի դիտորդի կարգա-վիճակ եւ որի աշխարհաքաղաքական ուղղվածությունը կասկածներ չի առաջացնում: Սակայն ներկա փուլում ՇՀԿ-ն զգուշացավ այդ երկիրն իր շարքերն ընդունելուց. նման քայլով ՇՀԿ-ն կվերածվեր ակնհայտ հակամերիկյան «բլոկի», ինչից առայժմ խուսափում են եւ Չինաս-տանը, եւ Ռուսաստանը: Միեւնույն ժամանակ, Իրանի համագործակ-

ցությունը ՇՀԿ երկրների հետ ամրապնդվում է. Շանհայում Իրանի նախագահ Ահմադինեժադը էներգետիկայի, մասնավորապես՝ գազի գների համատեղ կարգավորման ոլորտում, կարելու համաձայնությունների եկավ Ռուսաստանի նախագահ Պուտինի հետ:

Հարկ է նշել այն հանգամանքը, որ ՇՀԿ ձեւաչափն առանձնապես շահավետ է Ռուսաստանին, որը դրա շնորհիվ լրացուցիչ լծակներ է ձեռք բերել միջինասիական հանրապետություններում: Հայտնի է, որ Կենտրոնական Ասիայում մինչև վերջերս ՇՀԿ տեսանկյունից որպես «թույլ օղակ» ընկալվում էր Կիրգիզիան: Սակայն այսօր կարելի է փաստել, որ այդ հանրապետությունը սկսել է ընդունել ռուսական խաղի կանոնները: Արտաքին ոլորտում դա արտահայտվում է այն հետեւողական դժգոհություններով եւ պահանջներով, որոնք կիրգիզները ներկայացնում են ԱՄՆ-ին՝ կապված վերջինիս օդային ռազմակայանի տեղակայման վարձի հետ: Բնորոշ է նաեւ, որ ներքին դաշտում տեղի են ունենում հետեւողական կադրային փոփոխություններ, որոնց հետեւանքով իշխանության բարձրագույն օղակներում (այդ թվում՝ նախագահ Բաքիեւի աշխատակազմում) հայտնվում են ռուսաստանյան կողմնորոշում ունեցող գործիչներ:

Պետք է ամրագրել, որ ՇՀԿ-ն արդեն իսկ կայացել է որպես ուժի նոր կենտրոն, որը տարբերվում է համանման կառույցներից, առաջին հերթին, իր գաղափարախոսական մոտեցումներով: Այսօր տեղեկատվական դաշտում շրջանառության մեջ է դրվել, այսպես կոչված, «Շանհայի ոգի» հասկացությունը, որը ենթադրում է կազմակերպության երկրների միջեւ քաղաքակրթական-մշակութային հարցերում հարգալից վերաբերմունք եւ չի ընդունում, այսպես կոչված, «ժողովրդավարության» եւ այլ «ունիվերսալ» արժեքների վրա հիմնված արեւմտյան հրամայական մոտեցումները: Այս առումով, ՇՀԿ-ն կարող է խիստ գրավիչ դառնալ ասիական այլ երկրների համար:

ԱՄՆ նոր նախաձեռնությունները

Վերջին ժամանակահատվածում ԱՄՆ-ը զգալիորեն մեծացրել է ջանքերն ասիական ուղղությամբ: Դիվանագիտական ոլորտում դա իր արտահայտությունն է գտել անգամ քանակական տեսքով. 2006թ. ԱՄՆ պետդեպարտամենտը որոշել է, ի հաշիվ Արեւմտյան Եվրոպայի երկրներում իր դիվանագետների թվի կրճատման, զգալիորեն ավելացնել դիվանագիտական հաստիքներն ասիական երկրներում: Պետդեպարտամենտի

մարտավարության նման փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գլոբալ քաղաքականության եւ տնտեսության «ծանրության կենտրոնն» աստիճանաբար տեղաշարժվում է դեպի Ասիա, եւ ամերիկյան կառավարությունը փորձում է համապատասխան ձեւով արձագանքել այդ իրողությանը:

Դրա մասին է վկայում նաեւ ԱՄՆ հանրապետական սենատոր Սեմ Բրաունբեկի (որը դիտարկվում է որպես նախագահի հնարավոր թեկնածու 2007-ի ընտրություններում) ներկայացրած օրինագիծը, համաձայն որի՝ պետք է էապես մեծացնել Կենտրոնական Ասիային եւ Հարավային Կովկասին տրամադրվող ամերիկյան օգնության չափը: Որպես հիմնավորում նշվում է, թե այդ տարածաշրջաններում պետք է ամրապնդել ԱՄՆ ռազմավարական շահերը, սահմանափակել Ռուսաստանի աշխարհաքաղաքական նկրտումները եւ չեզոքացնել Իրանի ազդեցությունը: Հարավային Կովկասի համատեքստում՝ Բրաունբեկը հիմնականում անդրադարձել է Ադրբեջանին ու Վրաստանին (ՀՀ-ն գրեթե չի հիշատակվում) եւ ընդգծել է «սառեցված» հակամարտությունների կարգավորման անհրաժեշտությունը:

ԱՄՆ մյուս նախաձեռնությունները կապված են արեւելաեվրոպական երկրների հետ: Մասնավորապես, վերջերս Կիեւում տեղի ունեցավ ՎՈՒԱՄ-ի (Վրաստան – Ուկրաինա – Ադրբեջան – Մոլդովա) գագաթաժողովը, որի ընթացքում ընդունվեցին հետեւյալ որոշումները.

❖ ՎՈՒԱՄ անդամ երկրներից ձեւավորել ազատ տնտեսական գոտի:

❖ Հիմնել, այսպես կոչված, «էներգետիկ խորհուրդ», որը պետք է ապահովի կազմակերպության անդամ երկրների էներգետիկ անվտանգությունը:

❖ Վերանվանել ՎՈՒԱՄ-ը «Հանուն ժողովրդավարության եւ զարգացման» միջազգային կազմակերպության, որի հիմնադիրներ լինելու ցանկություն են հայտնել նաեւ Ռումինիան, Լեհաստանը եւ Բուլղարիան:

ՎՈՒԱՄ-ի հակառուսաստանյան ուղղվածությունն ակնհայտ է: Ավելացնենք նաեւ, որ արդեն որոշում է կայացվել Բուլղարիայում ամերիկյան խոշոր ռազմակայան տեղակայելու մասին, իսկ օրերս ԱՄՆ-ը հայտարարել է, թե Լեհաստանի տարածքում, ամենայն հավանականությամբ, պետք է տեղադրվեն հակահրթիռային համակարգեր,

որոնց խնդիրն իրանական հրթիռներից արեւելաեվրոպական տարածքը պաշտպանելն է: Իրանական հրթիռները, որոնց հեռահարությունը 1300կմ է, տեխնիկապես չեն կարող հասնել Եվրոպա, եւ պարզ է, որ համալիրները նպատակ ունեն սահմանափակել Ռուսաստանի՝ հրթիռային հարված հասցնելու հնարավորությունները¹: Այդ կապակցությամբ, Ռուսաստանի Գլխավոր շտաբի պետ Բալուեւսկին արդեն իսկ կատարել է համապատասխան հայտարարություն եւ նշել, թե ներկայումս մշակվում են անհամաչափ (ասիմետրիկ) մեթոդներ՝ ամերիկյան համակարգերը շրջանցելու նպատակով:

Որոշ հետեւություններ

Սկսած 2001 թվականից՝ մրցակցությունը ԱՄՆ-ի եւ Ռուսաստան–Չինաստան գործընկերության միջեւ սաստկանում է: Այսօր արդեն կարելի է ամրագրել այն հաջողությունները եւ անհաջողությունները, որոնք կողմերն ունեցել են վերջին տարիներին:

ԱՄՆ ռազմավարական ձեռքբերումներն են.

❖ Իր ազդեցության էական մեծացումը հետխորհրդային տարածքում՝ Վրաստանում, Ուկրաինայում եւ Մոլդովայում,

❖ ԱՄՆ-ին հաջողվել է իր ազդեցության ոլորտում ներառել արեւելաեվրոպական երկրներին՝ Լեհաստանին, Ռումինիային եւ Բուլղարիային, նրանց քաղաքականությանը հաղորդելով պրո-ատլանտյան, հակաեվրոպակենտրոն ուղղվածություն եւ այդպիսով պառակտել Եվրոպան:

Ներկայումս վերոհիշյալ երկրներին «Հանուն ժողովրդավարության եւ զարգացման» ձեւաչափում միավորելու եւ նրանց քաղաքականությանը հստակ հակառուսական ուղղվածություն հաղորդելու աշխատանք է տարվում: Հատկանշական է, որ այդ շրջանակներում ընդգրկված

¹ Համաձայն ամերիկյան հակահրթիռային մարտավարության՝ հակառակորդի հրթիռների ոչնչացումը դյուրին է կատարել, երբ վերջիններս դեռ նոր են բարձրություն հավաքում: Սակայն դրա համար անհրաժեշտ է, որպեսզի հակահրթիռները հնարավորինս մոտ գտնվեն հակառակորդի հրթիռային տեղակայանքներին, որպեսզի «հասցնեն» խոցել հրթիռները մեկնարկի ժամանակ: Այդ իսկ պատճառով ԱՄՆ-ը ձգտում է հակահրթիռային համակարգեր տեղակայել Ռուսաստանի եւ Չինաստանի սահմաններին մոտ:

Ադրբեջանը գաղափարապես շատ հեռու է «Հանուն ժողովրդավարության» կարգախոսից եւ ունի այլ աշխարհաքաղաքական նախասիրություններ, սակայն «գետեղվելով» որոշակի ձեւաչափում՝ Ադրբեջանի ղեկավարությունը գոնե մասամբ ստիպված կլինի իրագործել իր վրա դրված «հակառուսական» պարտավորությունները:

Որպես ԱՄՆ ռազմավարական կորուստ պետք է համարել նրա անհաջողություններն Իրաքում եւ ազդեցության զգալի նվազումը Կենտրոնական Ասիայում, առաջին հերթին՝ Ուզբեկստանում եւ Կիրգիզիայում:

Ռուսաստան – Չինաստան գործընկերության ռազմավարական ձեռքբերումներն են՝

- ❖ ՇՀԿ ձեւաչափի կայացումը եւ Ուզբեկստանը, Կիրգիզիան, Տաջիկստանն ու մասամբ Ղազախստանն իրենց ազդեցության ոլորտում ներառելը, ինչպես նաեւ Հարավային Կովկասում Ռուսաստանի ներկայության մեծացումը:

- ❖ Եվրոպակենտրոն տերությունների՝ Գերմանիայի եւ Ֆրանսիայի հետ տնտեսական եւ քաղաքական համագործակցության հաստատումը (այս համատեքստում պետք ընկալել Գերմանիայի կանցլեր Ա. Մերկելի այցերը Ռուսաստան եւ Չինաստան):

Տպավորությունն այնպիսին է, թե կողմերի միջեւ ստեղծվել է ուժերի որոշակի հավասարակշռություն: Այդ իրավիճակի պահպանումը կամ խախտումը գլխավորապես կախված է.

- ❖ ԱՄՆ – Իրան հակամարտության արդյունքներից: Եթե ԱՄՆ-ին հաջողվի առանց խոշոր հետեւանքների «խաղաղ» կամ պատերազմական մեթոդներով տապալել Իրանի վարչակարգը, ապա պետք է սպասել, որ այդ գերտերությունը կշարունակի իր հարձակողական ռազմավարությունը եւ մասնավորապես մեր տարածաշրջանում կհաստատի իր գերակայությունը²:

- ❖ ԱՄՆ նախագահական ընտրություններից: Դեմոկրատների իշխանության գալու դեպքում կարելի է սպասել, որ ԱՄՆ-ում սկսեն

² Նկատենք, որ որոշ փորձագետներ գտնում են, թե ԱՄՆ – Իրան ռազմական բախումը կարող է եւ ձեռնտու լինել Չինաստանին, քանի որ այդպիսով ԱՄՆ-ը «կխրվի» Իրանում եւ կպարտվի այնպես, ինչպես դա տեղի ունեցավ Վիետնամում:

գերակայել ինքնամեկուսացման («իզոլյացիոնիստական») միտումները: Այդ պարագայում չպետք է բացառել, որ Իրաքից զորքերը դուրս կբերվեն եւ ԱՄՆ-ը կփոքրացնի իր ներկայությունը տարածաշրջանում:

ՇՀԿ-ն առայժմ զարգանում է համաչափ, եւ մեծ փոփոխությունների պատճառներ Ռուսաստանի եւ Չինաստանի քաղաքականությունում առայժմ տեսանելի չեն:

Վերոհիշյալ հանգամանքները վկայում են այն մասին, որ մոտակա 1-2 տարում ՀՀ-ն պետք է չչտապի հստակեցնել իր աշխարհաքաղաքական կոմնորոշումները եւ պետք է փորձի նախկինի պես վարել համակողմանի քաղաքականություն:

**ՀՅՈՒՄԻԱՍԱՅԻՆ ԻՐԱՆՈՒՄ
ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ
Գոհար Իսկանդարյան**

Իրանի Իսլամական Հանրապետությունն այսօր գտնվում է համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում ոչ միայն իր միջուկային ծրագրի, այլև ներքին խնդիրների սրման պատճառով: Ինչպես գիտենք, Իրանը բազմազգ պետություն է: Ոչ իրանական ծագում ունեցող ժողովուրդները՝ ադրբեջանցիները, քրդերը, բելուջները եւ այլք, կազմում են բնակչության կեսը, սակայն նրանցից ոչ մեկը չի համարվում ազգային փոքրամասնություն եւ, բնականաբար, չի օգտվում ազգային փոքրամասնություններին տրվող իրավունքներից (օրինակ՝ ունենալ սեփական դպրոցներ): Լինելով մահմեդականներ՝ նրանք բոլորն էլ «ունմայի» անդամ են:

2006թ. մայիսի 8-ին երկրի ամենահայտնի կառավարամետ թերթերից մեկը՝ «Իրանը», տպագրեց հոդված՝ «Ի՞նչ անել միջատներին կանխելու համար» եւ մի ծաղրանկար, ինչը ոտքի հանեց ադրբեջանցիների մի ստվար զանգվածի (հոդվածի եւ ծաղրանկարի բովանդակությունն այս է. պատկերված է մի տղա, որը պարսկերենով մի քանի անգամ կրկնում է «խավարասեր» բառը: Խավարասերը շրջվում է եւ ադրբեջաներենով հարցնում՝ ի՞նչ): Թե ինչու է կառավարամետ «Իրան» թերթը նման ծաղրանկար պատկերել եւ ով է հրահրել այս լարվածությունը, կարելի է միայն կռահել: Այսօր Իրանի կառավարական շրջանակներում զգալի թիվ են կազմում ծագումով ադրբեջանցիները, իսկ ազերի բնակչության թվաքանակը երկրում տատանվում է 25-30 մլն-ի միջև: Գաղտնիք չէ նաեւ, որ Ատրպատականը միշտ էլ ձգտել է լինել կենտրոնական կառավարությունից անկախ: Այս առումով, ադրբեջանական հետքը, թերեւս, ամենաակնառուն է: Որպես հավելում՝ նշենք այն «զուգահեռությունը», որ ծաղրանկարի հեղինակը, ըստ ԲիԲիՍի լրատվամիջոցի, ծագումով ադրբեջանցի նկարիչ Մանոի Նեխեստանին է, որն այժմ ձերբակալված է:

Հետաքրքիր մեկ փաստ եւս. ծաղրանկարը տպագրվել էր մայիսի 8-ին, մինչդեռ բողոքի առաջին ալիքը բարձրացավ միայն մայիսի 15-ին: Տարօրինակ է, բայց ադրբեջանցիներին անհրաժեշտ էր 7 օր, որպեսզի

հասկանային, թե Իրանի կառավարությունը վիրավորել է իրենց ինքնասիրությունը:

Ծաղրանկարը բողոքի իրական ալիք բարձրացրեց հատկապես Իրանի հյուսիսային շրջաններում: Համաձայն «Եվրասիա» լրատվական գործակալության տեղեկատվության՝ Թավրիզում ոտքի ելան մի քանի հարյուր հազար ադրբեջանցիներ, Ջենջանում՝ 100.000, Խոյում՝ 50.000, Ուրմիայում՝ 200.000, վերջիններս նույնիսկ գրավեցին տեղական հեռուստատեսությունը: Այլ աղբյուրների համաձայն՝ գրաված շենքի տանիքին բարձրացվել է ադրբեջանական դրոշը: Սակայն կարճ ժամանակահատվածում ոստիկանությունը կարողացել է հարթել առաջացած խնդիրը եւ դուրս վտարել ցուցարարներին հեռուստատեսության շենքից: Հյուսիսային Իրանի գրեթե բոլոր քաղաքներում մտցվել են զորամիավորումներ՝ հիմնականում բաղկացած պարսիկներից, քանի որ մտավախություն կար, թե ադրբեջանցի զինվորականները համապատասխան պահին չեն ենթարկվի հրամանատարության հրամաններին: Ադրբեջանական տեղեկատվության համաձայն՝ 3000 մարդ ձերբակալվել է (թիվը, կարծում ենք, ուռճացված է): Մայիսի 26-ին ցույց տեղի ունեցավ նաեւ Փարսաբադ քաղաքում, որը եւս ճնշվեց կառավարական ուժերի կողմից: Գազազած ամբոխը հարձակվեց եւ հրդեհեց մի քանի բանկի շենք, իսկ բնակչությունը, որպես բողոքի ակցիա, դուրս եկավ մի շարք դպրոցներում պարսկերենի ուսուցման դեմ:

Հատկանշական է, որ Հոլանդիայում գտնվող «Ադրբեջանի ընկերների կազմակերպությունը» բողոքել է Իրանում տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ՝ նշելով, որ ի պաշտպանություն իրենց հարավային համերկրացիների՝ բողոքի ցույց է կազմակերպելու Հաագայում:

Ակտիվություն է նկատվում նաեւ Բաքվում, որտեղ, ըստ Day.Az. կայքի, ցուցարարները ԻԻՀ դեսպանատան առջեւ այրել են Իրանի դրոշը, ինչպես նաեւ սվաստիկան դեմքին Ահմադինեժադի ծաղրանկարը: Միաժամանակ, Իրանում ցուցարարները պահանջել են ադրբեջաներենը հռչակել պաշտոնական լեզու:

Իր հերթին, պաշտոնական Թեհրանը փորձել է մեղմել ադրբեջանցիների հուզումները: Փակվել է թերթը, ձերբակալվել են ինչպես նկարիչը, այնպես էլ խմբագիրը. ավելին, Իրանի մշակույթի նախարար Սաֆար Խարանդին ազգային հեռուստատեսությամբ ներողություն է խնդրել թերթում տպագրված ծաղրանկարի համար:

Այդուհանդերձ, ադրբեջանցիները «դժգոհ» են: Դրանից կարելի է եզրակացնել, որ այս խլրտումները, ամենայն հավանականությամբ, հրահրվում են արտաքին ուժերի կողմից: Դրա մասին, ի դեպ, ժամանակին խոսել է Պենտագոնի ղեկավարի խորհրդական Ռիչարդ Փերլը: Նա Իրանը համեմատել է «կավե ոտքերով հսկայի» հետ եւ մատնանշել, թե անհրաժեշտ է աջակցել խռովարար ուսանողներին, ազգայնական շարժմանը եւ թագավորամետ ուժերին, որոնք էլ վերջ կտան այաթոլաների իշխանությանը:

Ազգայնական շարժում ասելով՝ Ռ.Փերլը առաջին հերթին նկատի ունի Ատրպատականի (Իրանական Ադրբեջանի) եւ Քրդստանի նահանգները, որոնք միշտ էլ հավակնել են լինել անկախ կամ, զոնե, ձեռք բերել լայն իրավունքներ: Այսօր հարցն առավել անհանգստացնող է: Նախ՝ պետք է հաշվի առնել հատկապես Իրանում ադրբեջանցիների թվաքանակի աճը եւ ապա՝ հարեւան Ադրբեջանի Հանրապետության տարածքից հնչող հայտարարությունները, որոնք նպաստում են Իրանի տարածքում խլրտումների բորբոքմանը: Հիշենք, օրինակ, ս.թ. մարտի 16-ին «Աշխարհի ադրբեջանցիների երկրորդ համագումարի» որոշ ներկայացուցիչների հայտարարությունները, թե Ադրբեջանին ձեռնառու է աջակցել Միացյալ Նահանգներին՝ հակաիրանական գործողություններ հրահրելու ժամանակ:

Իրանական հետախուզությունն այս իրադարձությունների ծավալման մեջ մեղադրում է ամերիկյան եւ իսրայելական գաղտնի ծառայություններին: Ավելին՝ գտնում են, որ դրա համար օգտագործվում է հարեւան Ադրբեջանի Հանրապետության տարածքը:

Այս ելույթների հրահրման առիթով Իրանն առաջին հերթին կասկածում է Միացյալ Նահանգներում բնակվող Մահմուդ Ալի Չեհրադանլիին, որը «Ատրպատականի ազգային զարթոնք» շարժման առաջնորդն է: Նա վերջերս հայտարարել էր, որ այցելելու է Բաքու եւ Անկարա: Ի դեպ, Թավրիզում տիրող անկարգությունների ժամանակ ցուցարարները վանկարկում էին նրա անունը: (Վերջին տվյալների համաձայն՝ հունիսի 10-ին նա ձերբակալվել է Թուրքիայի տարածքում):

ԻԻՀ-ն մտահոգված է նաեւ, որ ամերիկա-իսրայելական գաղտնի ծառայություններին կօժանդակի թուրքական MIT-ը: Այդ տեղեկատվությունն այնքանով է արժանահավատ թվում, որքանով որ հայտնի է, թե սույն թվականի ապրիլի 14-ին Ադրբեջանի Ազգային անվտանգության նախարար Էլչար Մահմուդովի հրավերով եռօրյա այցելությամբ Բաքու ժամանեց Թուրքիայի Ազգային անվտանգության կազմակերպության

(MIT) ղեկավար ենրե Թաները: Էլդար Մահմուդովն իր գործընկերոջ հետ քննարկել է այն մտավախությունը, թե պաշտոնական Թեհրանը կփորձի ակտիվացնել հանրապետությունում առկա ծայրահեղ իսլամական տարրերին՝ Ադրբեջանի տարածքում անկայունություն սերմանելու նպատակով: Ի պատասխան՝ ենրե Թաները նշել է, որ այդ դեպքում նրանք կարող են լիահույս լինել, որ Թուրքիան կօժանդակի Ադրբեջանի Հանրապետությանը, քանզի «անվտանգության շրջանակներում Բաքվին աջակցություն ցուցաբերելը հանդիսանում է երկու եղբայրական պետությունների ավանդական հարաբերությունների բնական շարունակությունը»:

Հարկ է նշել, որ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադը եւս Իրանի հյուսիսային շրջաններում տեղի ունեցող իրադարձությունների մեջ մեղադրել է արտաքին ուժերին: Այդ կապակցությամբ Իրանի նախագահը հանդես եկավ ուղիղ եթերով. «Իսլամական Հանրապետության թշնամիները մտադրվել են կազմակերպել դավադրություն եւ ձգտում են պառակտել իրանական ժողովրդին, որպեսզի թույլ չտան մեր ժողովրդին միջուկային ոլորտում պաշտպանել իր իրավունքները: Եթե նրանք (թշնամիները) ամենաչնչին վնաս իսկ հասցնեն իրանական ժողովրդին կամ փորձեն իրականացնել նախահարձակում, ապա կստանան պատմական ապտակ: Նրանք (ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները) պետք է հասկանան, որ ոչ ոք չի կարող համախմբված իրանական ժողովրդի ներսում բախում հրահրել»:

Բացի ադրբեջանցիներից, արտաքին ուժերն Իրանում գրգռում են քրդերին, որոնք, ոգելորված Իրաքի քրդերի այսօրվա վիճակից, նույնպես կցանկանան մեծացնել իրենց իրավունքները: Ի դեպ, վերջերս ակտիվացել են նաեւ բելուջները:

Սակայն առայժմ Իրանում ադրբեջանական գործոնը մնում է հիմնական մտահոգիչ էթնիկ խնդիրը: Եվ հատկանշական է, որ պաշտոնական Թեհրանը ծայրահեղ բացասական վերաբերմունք է ցուցաբերում Բաքվի եւ Ատրպատականի միջեւ համերաշխության ցանկացած դրսեւորման նկատմամբ: Այդ կապակցությամբ, մասնավորապես, Իրանի նախագահի մերձավոր շրջապատից Ջալալ Մուհամեդն իր հարցազրույցներից մեկում նշել է, որ «համապատասխան պահին Թեհրանը կսատարի Ադրբեջանի Հանրապետությունում բնակվող թալիշներին եւ կիրահրի ազգամիջյան բախում այդ հանրապետությունում»:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ Միացյալ Նահանգները

Իրանի «հարցը» զուգահեռաբար փորձում է լուծել ոչ ռազմական ճանապարհով՝ երկրի ներսում խորացնելով ազգամիջյան լարվածությունը: Սակայն սխալ հաշվարկի դեպքում ամբողջ տարածաշրջանը կարող է բռնկվել ազգամիջյան խնդիրներով: Իսկ տարածաշրջանում մնան քառսը կարող է եւ կառավարելի չլինել:

Ինչ վերաբերում է Ատրպատականի հարցին, ապա կարծես օրինաչափություն է դարձել, որ եթե որեւէ գերտերություն (ցարական Ռուսաստանը, ԽՍՀՄ-ը, այսօր էլ՝ Միացյալ Նահանգները) ցանկանում է Իրանին ինչ-որ հարցի համար ճնշել, ապա սկսում է Ատրպատականից:

«ՅԻՆ» ԵՎ «ՆՈՐ» ԵՎՐՈՊԱՆԵՐԸ **Սուրեն Սարյան**

Աշխարհաքաղաքական իմաստով «նոր» Եվրոպա հասկացությունը կիրառվում է, երբ խոսքը վերաբերում է Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի նորաթուխ ժողովրդավարական երկրներին: Այլ կերպ ասած՝ բոլոր այն եվրոպական երկրները, որոնք դեռեւս քսան տարի առաջ եղել են «կոմունիստական արեւելյան ճամբարի» մասը եւ որոնք այսօր ունեն առավելապես «ամերիկամետ» դիրքորոշումներ, այսօր համարվում են «նոր» Եվրոպա:

«Յին» եւ «նոր» Եվրոպա արտահայտությունները լայն շրջանառության մեջ դրեց ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռանսֆելդը, Իրաքի պատերազմի ժամանակ՝ բաժանում մտցնելով ԱՄՆ-ի կողքին կանգնած եւ ամերիկյան ներխուժմանն ընդդիմացած Եվրոպական երկրների միջեւ. «Դուք կարծում եք, թե Եվրոպան Գերմանիան ու Ֆրանսիան են: Ես այդպես չեմ մտածում, իմ կարծիքով՝ նրանք հին Եվրոպան են»:

Իրոք, դեռեւս հինգ տարի առաջ ոչ ոք չէր կարող պատկերացնել, որ Իրաքում ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի կողքին լինելու են ոչ թե սառը պատերազմի ժամանակաշրջանում նրանց ավանդական դաշնակիցները՝ Ֆրանսիան եւ Գերմանիան, այլ, ասենք, Լեհաստանը, որ այդ նույն պատերազմի տարիներին հակառակ ճամբարում էր: Իրաքի պատերազմի, ԵՄ-ում առաջացած ճգնաժամի, Եվրոպայի էներգետիկ անվտանգության ապահովման հետ կապված հարցերում առավել քան երբեւէ բացահայտվեց «հին» եւ «նոր» Եվրոպաների տարանջատման, Եվրոպական քաղաքականության անմիասնականության երեւույթը:

Այսօր ԵՄ-ը կանգնած է լրջագույն մարտահրավերի առջեւ՝ հետ չմնալ Ղրղւսիսային Ամերիկայից եւ Արեւելյան Ասիայից համաշխարհային զարգացման մրցարշավում: Այդ առումով, «նոր» Եվրոպայի միացումը ԵՄ-ին կարելուագույն փուլ է: Հաջորդը կապված է լինելու արդեն Ռուսաստանում, Մեծ Մերձավոր Արեւելքի եւ Կենտրոնական Ասիայի երկրներում Եվրոպական ազդեցության տարածման հետ: Սակայն դա՝ ավելի հեռու ապագայում:

Իսկ այս փուլում «հին» Եվրոպան զբաղված է լինելու «նոր» Եվրոպացիների «մարսմամբ», նրանց իր համակարգին ինտեգրելու

գործով: «Նոր», սակայն տնտեսապես դեռևս թույլ Եվրոպան հավակնում է հավասարը հավասարի հետ խոսել «հին» եւ ավելի հզոր Եվրոպայի հետ: Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի հակադրումը «նոր» Եվրոպային հասկանալի է. չէ՞ որ իրենք են եղել ԵՄ հիմնադիրները:

Ամեն դեպքում, Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրներն ավելի ակտիվ են, քան ԵՄ արեւմտյան մասը, որը, սակայն, շարունակում է իր ձեռքում պահել գլխավոր հաղթաթուղթը՝ ֆինանսական հզորությունը: ԵՄ վերջին ընդլայնումը Միությանը բերեց նոր շուկաներ, արտադրության ծավալների ընդլայնում, տնտեսական աճ: Միաժամանակ, տնտեսական ցուցանիշները վկայում են, որ հենց Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրներում է այսօր արձանագրվում տնտեսական վերելք:

Սակայն, եթե ԵՄ-ը ձեւավորվի որպես ավելի «փափուկ» կառույց, որտեղ առաջնահերթ դեր են ստանձնում տարածաշրջանային եւ անգամ ենթատարածաշրջանային «օղակները», ապա «նոր» Եվրոպայի շարքերն անընդհատ լրացվելու են: Այս առումով, գործընթացներն արդեն գնում են: Կարելի է հիշատակել Կատալոնիայի, Բասկերի երկրի, Շոտլանդիայի կամ Կոսովոյի պարագան, էլ չասելով Մոնթենեգրոյի մասին, որոնք քայլ առ քայլ կարող են դառնալ ԵՄ առանձին մաս կազմող միավորներ:

Իսկ ներկայումս, թեւ «նոր» Եվրոպայի երկրներին Վաշինգտոնը հովանավորում է «Բալթիկ-Սեւծովյան ժողովրդավարական համագործակցության» մեջ միավորելու ուղղությամբ (ինչի նպատակով այս տարվա մայիսի սկզբին Վիլնյուսում ԱՄՆ փոխնախագահ Չեյնիի, Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Մոլդովայի, Ուկրաինայի եւ Վրաստանի նախագահների մասնակցությամբ կայացավ այդ կազմակերպության գագաթաժողովը), սակայն այդ երկրներից ոմանց նշյալ միավորումն առանձնապես չի հետաքրքրում, իսկ մյուսներին հետաքրքրում է այնքանով, որ այն թռիչքադաշտ է դեպի ՆԱՏՕ եւ ԵՄ անդամակցություն: Ավելի հեռանկարային է թվում «նոր» Եվրոպայի երկրներից բաղկացած, համեմատաբար ինքնուրույն տարածաշրջանային միավորների զարգացումը՝ ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի հետ համակարգված ուղղությամբ: Հայտնի է, որ դեռևս 1991թ. Չեխոսլովակիայի նախագահ Վացլավ Հավելի, Լեհաստանի նախագահ Լեխ Վալենսայի եւ Հունգարիայի վարչապետ Յոժեֆ Անթալի նախաձեռնությամբ ստեղծվեց «Վիշեգրադյան խումբը», որը Կենտրոնական Եվրոպայի այս երկրները միավորում էր մեկ աշխարհա-

քաղաքական եւ տնտեսական տարածության մեջ: Այսօր «Վիշեգրադյան խումբն» ակտիվացրել է գործունեությունը եւ ծրագրում է հրավիրել Լիտվային, Սլովենիային, Լատվիային, Ուկրաինային, Խորվաթիային, Ռումինիային եւ Բուլղարիային՝ դրանով ամբողջացնելով ԵՄ եւ ՆԱՏՕ անդամակցությանը ձգտող երկրներին: Դա ցույց է տալիս, որ միայն Բրյուսելից եկող որոշումներով չի նախանշվելու Եվրոպայի կամ Եվրամիության ճակատագիրը:

«Յին» եւ «Նոր» Եվրոպաների իրական ինտեգրումը շատ բանով կախված է լինելու Գերմանիայից, որը պետք է մոտակա ժամանակահատվածում ճշգրտի իր արտաքին ռազմավարությունը, այսինքն՝ ինչպես է նա կառուցելու իր հարաբերություններն ԱՄՆ-ի հետ, ինչպես է վերաբերվելու ԵՄ եւ ՆԱՏՕ հետագա ընդլայնմանը եւ ինչ դեր է հատկացնելու Ռուսաստանին: Բեռլինում «Նոր» Եվրոպայի մաս կազմող երկրները մշտապես դիտվում են որպես կրտսեր գործընկերներ: Այդ պատճառով էլ այդ երկրների շահերն անտեսվեցին, օրինակ, գերմանա-ռուսական գազային գործարքի կնքման ժամանակ (Լեհաստանի եւ Մերձբալթիկայի որոշ քաղաքական ղեկավարներ Յուլիս-Եվրոպական գազամուղի մասին գործարքի կնքումն անվանեցին «Ռիբենտրոպ-Մոլոտով» նոր պայմանագիր, որով Գերմանիան եւ Ռուսաստանը վերստին բաժանում են Եվրոպան):

Ամենայն հավանականությամբ, մինչեւ 2010թ., երբ կավարտվի Յուլիս-Եվրոպական գազամուղի կառուցումը Բալթյան ծովի հատակով, ԱՄՆ այսօրվա աշխարհաքաղաքական դաշնակիցները՝ Լեհաստանը, Լիտվան, Լատվիան, Էստոնիան եւ Ուկրաինան, ինչպես նաեւ Չեխիան, Յունգարիան, Սլովակիան կհայտնվեն Գերմանիայի բարի կամքից ուղղակի կախվածության մեջ եւ ստիպված կլինեն իրենց շուկաները լիովին ենթարկեցնել գերմանական կապիտալին: Այս ճանապարհին Բեռլինին ամենեւին շահավետ չէ այնպիսի իրավիճակ, որտեղ «Նոր» Եվրոպայի երկրները ներկայացնեն իրենց աշխարհաքաղաքական եւ տնտեսական հավակնությունները՝ միասնական ուժային կենտրոնի դիրքերից:

Ասվածը վերստին վկայում է, որ Եվրոպան միասնական, միասեռ մարմին չէ: Տարբերությունները «հին» եւ «Նոր» Եվրոպաների միջեւ պակաս չեն, քան ընդհանրությունները: Այսպես, «հին» Եվրոպան չունի Ռուսաստանի հանդեպ այն զգացումները, որոնք տածում են «Նոր» Եվրոպացիները՝ հարյուրամյակներ զգալով ռուսական ցարիզմի եւ կոմունիզմի բացասական ազդեցությունն իրենց վրա: Եվ հակառակը, «Նոր» Եվրոպայի երկրները կարող են հաշվի չառնել «մահմեդական»

գործոնը եւ իսլամական Արեւելքի հանդեպ չունեն խիստ զգայուն մոտեցումներ, որոնք առկա են Ֆրանսիայի, Գերմանիայի կամ Մեծ Բրիտանիայի մոտ, որտեղ կան մեծաթիվ մահմեդական համայնքներ:

Անգամ Զոլոքոստի նկատմամբ վերաբերմունքը Եվրաարեւմուտքի եւ Եվրաարեւելքի դեպքում տարբերվում է: Զայտնի է, որ հրեական Ողջակիզման համար մեղքի զգացումը եղել է գերմանացիների պատմական զղջման եւ իրենց հարեւանների հետ հաշտեցման, ասել է թե՛ Եվրոպական ինտեգրման միջուկը: Մինչդեռ «նոր» Եվրոպացիները իրենց եւս համարում են տուժած կողմ եւ չեն բացառիկացնում Զոլոքոստի երեւոյթն իրենց քաղաքականության մեջ՝ դիմելով «հին» Եվրոպային մոտավորապես այս ոճով. «Այո, դուք, արեւմտաեվրոպացիներդ, դարձաք Զիտլերի զոհերը, սակայն մենք դարձանք ինչպես Զիտլերի, այնպես էլ Ստալինի զոհերը»: Այդ է պատճառը, որ հենց «նոր» Եվրոպացիներն են փոխհատուցում պահանջում ոչ միայն եւ ոչ այնքան Գերմանիայից, որքան Ռուսաստանից եւ հավասարեցնում են նացիոնալ-սոցիալիզմն ու կոմունիզմը՝ որպես Եվրոպական քաղաքակրթությանը հավասարապես վնաս հասցրած երեւոյթներ:

Այնպես որ՝ «հին» եւ «նոր» Եվրոպաներ բաժանումը դեռեւս հաղթահարված չէ: Բաժանումը կարող է ավելի խորանալ, եթե այսօրվա Արեւմտյան Եվրոպայում շարունակվի ոչ բնիկ Եվրոպացիների ներհոսքը, ինչն արմատապես կփոխի այդ երկրների դիմագիծը, մինչդեռ Եվրաարեւելքի երկրները դեռեւս զերծ են մնում այդ ներհոսքից, ինչի շնորհիվ բուն Եվրոպական արժեքների կրողը դառնում են հենց չեխերը, լեհերը, խորվաթները կամ ուկրաինացիները:

Իսկ դա նշանակում է, որ ԵՄ-ը բախվելու է ազգային շահերն ու արժեքները համընդհանուր Եվրոպական շահերի եւ արժեքների հետ հաշտեցնելու մարտահրավերին: Եթե առաջիկաները «ջարդվեն», ապա Միացյալ Եվրոպա չի ստացվի, դա կլինի ընդամենը Ամերիկայի կամ ԽՍՀՄ կլոնավորված տեսակը: Եվրոպայի արժեքը հենց այն է, որ այստեղ ազգայինն ու համաեվրոպականը հակադրության մեջ չեն ընկալվել, միասնությունը դիտվել է բազմազանության եւ բազմատեսակության մեջ: Առաջինն առանց երկրորդի՝ նորից կբերի մայրցամաքում վերջին դարերում իշխող կատաղի մրցակցությանը եւ ազգայնամոլության հաղթարշավին, իսկ երկրորդն առանց առաջինի՝ կդարձնի Եվրոպան բովանդակազուրկ եւ թուլական մի միավորում, որը բաց է արտաքին միջամտությունների եւ ներքին ապստամբությունների համար: Անցյալ տարվա աշնանը Ֆրանսիայում տեղի ունեցած դեպքերն ազդակ էին «հին» Եվրոպային, թե ինչի է բերում ազգային ինքնության

ինքնամերժման բացարձակացումը եւ բազմակուլտուրալիզմով չափազանց կլանվելը: Մինչդեռ «նոր» Եվրոպան դեռեւս պահպանել է իր ինքնության որոշակի զգացումը, չնայած այսօր թե՛ Լեհաստանում, թե՛ Ուկրաինայում, թե՛ Յունգարիայում սովորական ընտրողներն իրենց քվեն տալիս են ոչ թե ազգային արժանապատվության, այլ աշխատավարձերի եւ թոշակների մասին խոսող ուժերին եւ գործիչներին: Դա նշանակում է, որ «հին» Եվրոպան սկսում է լրջորեն ազդել «նորի» վրա: Ամեն դեպքում, մոտակա տարիները ցույց կտան՝ արդյո՞ք «նոր» Եվրոպան դառնալու է «հին» նման, թե՞ իսկապես նոր լիցքեր, նոր արյուն կհաղորդի վերջինիս:

«Հին» Եվրոպայի պետություններում շարունակում են դեմ արտահայտվել Եվրոպական Սահմանադրության ընդունմանը եւ համարում են, որ ԵՄ-ը հոգնել է ընդլայնումից եւ պետք է կանգ առնել այդ ճանապարհին, իսկ «նոր» Եվրոպացիների մեծ մասը պատրաստակամ է հավանություն տալ այդ նշանակալի փաստաթղթին եւ ողջունել եւս նոր տասը-տասնհինգ երկիր՝ Միությանն անդամակցելու համար: Տնտեսությունն անկում է արձանագրում Ֆրանսիայում, լճացում՝ Գերմանիայում, իսկ Լեհաստանը, Յունգարիան, Լատվիան, Սլովենիան հանդես են բերում տնտեսական աճ: «Նոր» Եվրոպայի երկրներն ունեն ավելի «լավատեսական» աշխարհընկալում. նրանք ձգտում են զարգացման, նրանք «սով» են զգում հաջողությունների եւ արդյունքների նկատմամբ:

Եվ եթե Եվրոպայի արեւմուտքն այսօր համակված է «եվրահոռետեսությամբ», ապա Բալթիկայում, Կենտրոնական Եվրոպայում, Բալկաններում, Ուկրաինայում, Թուրքիայում տրամադրությունները դեռեւս մնում են «եվրալավատեսական»: Քաղաքական առումով Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրների համար Եվրոպայի ապահովագրացումը մղծավանջ է: Նրանք դեռ չեն մոռացել այն ժամանակները, երբ եղել են, փաստորեն, մանրադրամ կայսերապաշտական Գերմանիայի եւ Ռուսաստանի կամ ԱՄՆ-ի ու ԽՍՀՄ-ի միջեւ: Եվրոպական միասնությունը նրանց համար երաշխիք է՝ խուսափելու նման իրավիճակների կրկնությունից, եւ այդ է պատճառը, որ նրանք այսօր առավել անհանգստացած են Գերմանիայի եւ Ռուսաստանի միջեւ նշարվող դաշինքից:

1920-30-ական թվականներին «նոր» Եվրոպայի երկրներն արդեն ծառայում էին որպես բոլշեւիկյան Ռուսաստանի դեմ բուֆերային գոտի: Ի վերջո, նացիստական Գերմանիան եւ ԽՍՀՄ-ը եկան համաձայնության՝ կիսելու Կենտրոնական ու Արեւելյան Եվրոպան: Այսօր Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրները ԱՄՆ-ի համար

հանդիսանում են մի յուրովի «գտիչ», հակակշիռ Գերմանիային եւ Ֆրանսիային, որոնք գլոբալ մակարդակում հետապնդում են ամերիկյան շահերից տարբերվող քաղաքականություն: Սակայն ինչքան այդ «նոր» եվրոպական երկրներն ինտեգրվեն ԵՄ-ում, այնքան նրանց կապերը Բրյուսելի, Փարիզի եւ հատկապես Բեռլինի հետ ամրապնդվելու են: Այս առումով, Վաշինգտոնը չի կարող հեռահար ռազմավարական ծրագրեր կառուցել «նոր» Եվրոպայի երկրներում: Լեհաստանի, Բուլղարիայի կամ Ուկրաինայի այսօրվա առավելապես ամերիկամետ քաղաքականությունը հետզհետե փոխարինվելու է ավելի գերմանամետ կամ եվրոպամետ քաղաքականությամբ:

Իրոք, գնալով ամերիկյան ու ռուսական գործոնների ազդեցությունը «հին» ու «նոր» Եվրոպայի երկրների վրա էապես նվազելու է՝ չնայած նրանք պահպանելու են իրենց գործընկերությունը ԱՄՆ-ի եւ հաստատելու են կայուն հարաբերություններ Ռուսաստանի հետ, սակայն նրանց բոլորի ձգողականության կենտրոնը կապված է լինելու հենց ԵՄ եւ ՆԱՏՕ եվրոպական առանցքի հետ:

Իսկ դա նշանակում է, որ սխալ կլիներ ընկալել Գերմանիայի քաղաքականությունը որպես ամբողջ Եվրոպայի քաղաքականություն եւ նմանապես ասել, որ Լեհաստանի կամ Մերձբալթյան երկրների ձգտումներն արտացոլում են եվրոպական ընդհանուր քաղաքականությունը: ԵՄ ամբողջ կառուցվածքն այլևս ինստիտուցիոնալացված է, եւ այդ մեքենան գործում է սեփական տրամաբանությունից ելնելով: Այս առումով, ԵՄ-ը եւ ՆԱՏՕ-ն այն վայրն են, որտեղ «հին» ու «նոր» Եվրոպան գալիս են փոխզիջումների եւ ստեղծում համաձայնությունների մի ամբողջ դաշտ. այդ ինստիտուտների միջոցով է ձուլվում ու ձուլվելու միասնական Եվրոպան:

Ամեն դեպքում, «նոր» եվրոպացիների հաջողությունները խոսում են «Եվրոպական նախագծի» օգտին եւ հրապուրիչ են նորեկների համար: «Նոր» Եվրոպան ավելի շարժունակ դարձրեց ԵՄ-ը, մինչդեռ «հին» եվրոպացիները շարունակաբար իրենց բոլոր դժվարությունների մեջ մեղադրում են Բրյուսելին, ԵՄ-ին: Չնայած «հին» եվրոպական պետությունները դեռեւս փորձում են պահել այն իրավիճակը, երբ իրենք էին որոշումներ կայացնում, սակայն վերջինս անկարող է այլևս ապահովել Եվրոպայի մրցունակությունը համաշխարհային ասպարեզում: Ինչպես դեռեւս երեսուն տարի առաջ նշում էր ֆրանսիացի քաղաքագետ Ռայմոն Արոնը, «Արեւմտյան Եվրոպան հետզհետե կորցնում է իր ինքնավստահությունը, կամքն առ հաղթանակ... Եսասիրական գեղոնիզմի քաղաքակրթությունը դատապարտված է կործան-

ման, երբ նա կորցնում է հետաքրքրությունն իր ապագայի նկատմամբ»:

Իսկ եթե Եվրոպան, իրոք, հավակնում է մրցակցել Ամերիկայի կամ Ասիայի հետ համաշխարհային խաղատախտակին, ապա պետք է ունենա անհրաժեշտ ժողովրդագրական ռեսուրսներ եւ բարոյական էներգիա, որոնք նա կարողանալու է ապահովել միայն «նոր» Եվրոպայի երկրների ու ժողովուրդների հաշվին:

Եվ քանի որ ինքը՝ «Եվրոպական նախագիծը», ի հայտ եկավ որպես սահմանները, տարածքային հայեցակարգը մերժող նախագիծ, ապա Եվրոպան չի կարողանալու գնալ նոր տարածքային արգելքների հաստատման կամ բաժանարար գծերի անցկացման, քանի որ առաջին վնաս կրողը դրանից լինելու է հենց ԵՄ-ը: Այդ պատճառով էլ Եվրոպան չի գնալու իր վերջնական սահմանների որոշմանը: Եվրոպան՝ լինի «հին» կամ «նոր», այնտեղ է, որտեղ տարածվում եւ տարածվելու են նրա քաղաքակրթական արժեքները, քաղաքական սկզբունքները, տնտեսական դաշտը:

Մյուս կողմից, եթե ԵՄ-ը շարունակի ընդլայնվել, ապա կարող է բախվել ԽՍՀՄ տիպի կայսրության վերածվելու վտանգին, որի տարածքն ու բնակչությունն այնքան մեծ ու բազմազան են, որ որեւէ իրական միասնականություն ապահովելը սկզբունքովար, իսկ վերջում անհնար է լինելու: Սակայն, եթե «հին» ու «նոր» Եվրոպաները եւ այնտեղ բնակվող ազգերը միավորվեն ոչ թե արհեստականորեն, այլ իրար փոխլրացնող ազգային բազմազանության եւ ազգային ինքնությունների հիմքի վրա, ապա, թերեւս, հենց Եվրոպան է դառնալու աշխարհի ապագա մոդելը:

**ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԸ ԱՐԵՎՍՈՒՏՔԻ ԱՉՔԵՐՈՎ.
ԿԵՐՊԱՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ
Սուրեն Մանուկյան**

Հաշվի առնելով այսօրվա աշխարհում հանրային կարծիքի հսկայական դերը՝ ժամանակակից ցանկացած պետություն կարիք է զգում ձեւավորել գործընկեր կամ հակառակորդ երկրների յուրատեսակ կերպարներ՝ հիմնավորելու համար իր կողմից իրականացվող գործողությունները:

Այս իմաստով, այն կերպարը, որը ձեւավորվել է արեւմտյան հասարակություններում Մերձավոր Արեւելքի եւ, մասնավորապես, մահմեդական Արեւելքի նկատմամբ, հիմնականում չի համապատասխանում գոյություն ունեցող առարկայական իրողություններին: Սակայն հենց այս արհեստական պատկերացումն է հաճախ ձեւավորում հասարակական կարծիք եւ համապատասխան քաղաքականության իրականացման հիմնավորում դառնում:

Գիտության ոլորտում գոյություն ունեցող ենթակայական այս մոտեցումը փայլուն կերպով ներկայացրել է պաղեստինյան ժագումով ամերիկյան նշանավոր հասարակագետ Էդվարդ Սաիդն իր «Օրիենտալիզմ» գրքում: Սակայն կա մեկ այլ ոլորտ, որտեղ այս իրավիճակն ավելի ցայտուն է արտահայտված եւ որն ավելի մեծ ազդեցություն ունի հասարակության վրա:

Ֆրանսիացի քաղաքագետ Իվ Լաքոստը հստակ ընդգծում է այն նշանակությունը, որ ժամանակակից տեղեկատվական հասարակությունում ձեռք են բերել լրատվամիջոցները եւ հատկապես հեռուստատեսությունը, որը հանրային կարծիք ձեւավորող հիմնական գործիքն է: Պատճառն այն է, որ ժամանակակից աշխարհում, ըստ Լաքոստի, հիմնականում գերիշխում է երեւույթների գնահատման ոչ թե ռացիոնալ մոտեցումը, այլ «կերպարի» (իմիջի) գունեղության չափանիշները: Որքան ավելի պայծառ եւ գրավիչ է պատկերը, այդքան ավելի արժանահավատ եւ կարելի է այն համարվում: Սա բավական լավ հասկացել են արեւմտյան ՋԼՄ-ը եւ արդյունավետ կերպով կիրառության մեջ դրել:

Հասարակության գերակշիռ մասի քաղաքական, գաղափարական եւ աշխարհաքաղաքական հայացքները ձեւավորվում են հիմնականում

հեռուստատեսության միջոցով: Որել է թեժ կետից հեռարձակվող ռեպորտաժի նպատակն է ոչ միայն նվազագույն ժամանակահատվածում ներկայացնել նյութի հետ կապված համալիր պատկերը, այլ նաև քաղաքական անհրաժեշտ շեշտադրումներ անել: Այսպիսով, լրագրողի (հատկապես հեռուստալրագրողի) մասնագիտությունը ոչ միայն նկարագրական, այլ նաև կողմնորոշող բնույթ է ստանում:

Այս պարագայում ամենեւին էլ զարմանալի չէ այն հսկայական դերը, որ խաղում են ամերիկյան եւ եվրոպական վերլուծաբանները եւ լրատվամիջոցները Մերձավոր Արեւելքում ընթացող շատ իրադարձությունների նկատմամբ հանրային կարծիքի ձեւավորման գործում: Սա պայմանավորված է արեւմտյան ՁԼՄ ուժով եւ արհեստավարժությամբ, որոնք կարողանում են ձեւավորել իրենց համար ձեռնտու, իսկ հանրության համար գրավիչ պատկերներ եւ հասարակությանը հանդել դրանց ճշմարտացիության մեջ: Արհեստականորեն ստեղծված իրականությունը բազմաթիվ կրկնություններից հետո սկսում է ընկալվել իբրեւ միակ ճշմարտություն:

Իրականում աշխարհը Մերձավոր Արեւելքին «նայում է Արեւմուտքի աչքերով»: Դա վերաբերում է ե՛ւ միջազգային ահաբեկչության դեմ պայքարին, ե՛ւ արաբ-իսրայելական հակամարտությանը, ե՛ւ իսլամական պետություններում տեղի ունեցող ներքին գործընթացներին: Շատ տեղեկություններ կան վերլուծականներ կարող են բոլորովին չհամապատասխանել իրականությանը, սակայն դառնում են ակտիվ քննարկման առարկա եւ մտնում շրջանառության մեջ՝ ձեւավորելով եւ համալրելով Մերձավոր Արեւելքի վերաբերյալ կարծրատիպերը եւ առասպելները:

Կան մի քանի տարածված մոտեցումներ, որոնցով արեւմտյան լրատվամիջոցները ներկայացնում են մահմեդական Արեւելքը:

1. ՁԼՄ-ը չեն մատուցում համապարփակ տեղեկատվություն այս տարածաշրջանի վերաբերյալ: Տեղեկությունները շատ աղճատված են եւ ամբողջական պատկերացում չեն տալիս Մերձավոր Արեւելքում ընթացող զարգացումների վերաբերյալ: Տեղեկատվության մեծ մասը կրում է ընդգծված բացասական երանգ (ահաբեկչական գործողություններ, սպանություններ, բռնություններ): Վատ լուրերը գերակշռում են այս տարածաշրջանից ստացվող լրահոսում, եւ տեղեկատվության այս բնույթն ունկնդրի մոտ ձեւավորում է մահմեդական Արեւելքի՝ հիմնականում անկայունության եւ հակամարտությունների տարածաշրջան լինելու կարծիքը: Հետաքրքիր է, որ քաղաքական բացասական

այս պատկերի կողքին կա բավական դրական մշակութային-սպառողական պատկեր. արեւելյան էկզոտիկան, ի տարբերություն արեւելյան քաղաքականության, նորածեւ է եւ գրավիչ:

Հիմնական ուղերձը, փաստորեն, հետեւյալն է. Արեւելքը գրավիչ է եւ էկզոտիկ, սակայն նրա քաղաքական կարգերն անընդունելի են, հետեւաբար՝ վարչակարգերը պետք է փոխվեն:

2. Լրագրողներն իրադարձությունները մատուցելու եւ գնահատելու ընթացքում հստակորեն հենվում են արեւմտյան չափանիշների եւ արժեքային համակարգի վրա: Ընդ որում, արեւմտյան արժեքների դերը եւ նշանակությունը հստակ գերազնահատված են: Արհեստականորեն արեւմտյան չափորոշիչների մեջ դնելով իրադարձությունները եւ վերլուծության համար օգտագործելով տեղի պայմաններին լիովին չհամապատասխանող կատեգորիաներ՝ լրագրողներն ի սկզբանե խեղաթուրում են իրականությունը: Օրինակ, խոսելով Մերձավոր Արեւելքում տեղի ունեցած ընտրությունների մասին՝ շեշտը դրվում է դրանց արեւմտյան ժողովրդավարությանը համապատասխանության վրա, չնայած տեղի բնակչությունը հիմնականում ղեկավարվում է այլ չափանիշներով՝ ուժեղ իշխանություն, կայունություն, ուժային հավասարակշռության պահպանում են:

3. ՁԼՄ-ը կեղծ կարծրատիպերի ստեղծման եւ ամրապնդման հիմնական աղբյուր են դառնում: Հեռուստաալիքները հիմնականում փորձում են դուրս չգալ «պաշտոնական» կարծրատիպերի եւ պատկերների շրջանակից, քանի որ դրանք ավելի են հեշտացնում նյութի ընկալումը:

Օրինակ, կան Մերձավոր Արեւելքի հետ կապված մի քանի «առասպելներ», որոնք ամենահաճախ օգտագործվողներից են, սակայն չեն դիմանում անգամ ամենապարզ քննադատությանը.

ա) «Մերձավոր Արեւելքի բնակիչները իսլամի մուլեռանդ հետեւորդներ են»: Իրականում, արդի մերձավորարեւելյան հասարակություններում մուլեռանդ մահմեդականները կազմում են բնակչության փոքր մասը միայն:

բ) «Մահմեդական երկրներում կինն իրավազուրկ է եւ ճնշված»: Սակայն մահմեդական շատ երկրներում կանանց ազդեցությունը եւ նշանակությունը քաղաքականության ու տնտեսության մեջ անշեղորեն մեծանում է՝ ի հավելումն արեւելյան ընտանիքներում նրանց մշտապես բավական բարձր դիրքի:

գ) «Արեւելյան քաղաքի կյանքը խորհրդավոր եւ անհասկանալի է»:

Այսօր մերձավորարեւելյան քաղաքների պատկերն այդքան էլ չի տարբերվում, օրինակ, հարավեվրոպական քաղաքների պատկերից:

դ) «Իսլամը դաժան է եւ անողոք»: Իսլամը դեռ միջին դարերում աչքի է ընկել նույնիսկ եվրոպացիների համար անսովոր հանդուրժողականությամբ: Պատահական չէ, որ Եվրոպայում հետապնդումների ենթարկվող հրեաները եւ քրիստոնյաները մշտապես ապաստան էին գտնում հենց իսլամական երկրներում, որտեղ ստանում էին դավանանքի ազատություն:

4. Նյութի մատուցումը հիմնվում է ոչ թե վերլուծության, այլ, որպես կանոն, պատկերի գունեղության առաջնայնության սկզբունքի վրա: Իսլամական աշխարհին վերաբերող թեմաները բավական բարձր վարկանիշ ունեն, եւ հեռուստաընկերություններն օգտվում են դրանից: 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո ՁԼՄ-ը սկսեցին ուղղակի դիվակա-նացնել իսլամը: Այն սկսեց որակվել իբրեւ «ագրեսիվ» կրոն, իսկ իսլամ դավանողները՝ «մոլեռանդ հավատացյալներ»: Հեռուստալրագրողների եւ վերլուծաբանների կողմից ավելի հաճախ սկսեց գործածվել «Իսլամական ահաբեկչություն» տերմինը, եւ այս արտահայտությունը սկսեց հետեւողականորեն քարոզվել. այսօր շատերի համար «իսլամ» եւ «ահաբեկչություն» բառերը ենթագիտակցական կապ են ստացել:

Այսպիսով, արեւմտյան վերլուծաբանների եւ լրատվամիջոցների ներկայացրած Մերձավոր Արեւելքը խիստ գաղափարաբանված է եւ շատ է տարբերվում իրականում գոյություն ունեցողից:

Այս վիրտուալ պատկերը շատ հաճախ որդեգրվում եւ տարածվում է նաեւ մեր լրատվամիջոցների կողմից: Արեւմուտքի պարագայում նման մոտեցումը հասկանալի է, քանի որ գործում է հստակ ծրագիր՝ ստեղծել թշնամու կերպար, սպառնալիքի զգացում, որից պետք է պաշտպանվել եւ որի դեմ պետք է գործել: Սակայն հայկական լրատվամիջոցների կողմից այս կերպարի վերարտադրությունը ոչ միայն զարմանալի է, այլեւ խիստ վտանգավոր: Պատմականորեն լինելով մերձավորարեւելյան քաղաքակրթության մաս՝ մենք ընդունակ ենք յուրովի հասկանալ Արեւելքը եւ նրա կերպարը համապատասխանեցնել մեր խնդիրներին:

ԻՐԱՔ. ԱՆՈՐՈՇ ԱՊԱԳԱ **Արաքս Փաշայան**

Հունիսի 7-ին Իրաքում ամերիկյան օդուժի հասցրած հարվածներից Բաակուբա քաղաքի նոտակայքում գտնվող իր թաքստոցում սպանվեց տեղական ալ-Կաիդա ահաբեկչական խմբավորման առաջնորդ Աբու Մուսաբ Ջարկավին: Գործողությունն իրականացվել է հետախուզական տվյալների հիման վրա, որոնք, ի դեպ, ստացվել են նաև ալ-Կաիդայի անդամներից: Դեպքի մանրամասները հրապարակեց Իրաքում ամերիկյան զորքերի գլխավոր հրամանատար Ջորջ Կեյսին:

Աբու Մուսաբ Ջարկավին ծնվել է 1966թ. Հորդանանում: Մասնակցել է աֆղանական պատերազմին, որի ավարտից հետո, վերադառնալով Հորդանան, իր համախոհների հետ զինված պայքար է սկսել՝ երկրում իսլամական կարգեր հաստատելու համար: Արդյունքում՝ 1992-ին դատապարտվել է 15 տարի ազատազրկման, սակայն 1999-ին ներման է արժանացել, այնուհետև հեռացել երկրից՝ հետապնդումներից խուսափելու համար: Հորդանանյան դատարանը մի քանի անգամ նրան հեռակա կարգով մահվան է դատապարտել՝ ահաբեկչական գործողություններ կազմակերպելու մեղադրանքով: Աֆղանստանում 2001-ին վիրավորվել է: ԱՄՆ-ի կողմից Իրաքի օկուպացիայից հետո սկսել է գործել Իրաքում, իսկ 2004-ից ղեկավարել է տեղական ալ-Կաիդան:

Առկա տեղեկությունների համաձայն՝ Ջարկավիի հայտնաբերման եւ ոչնչացման գործողություններին մասնակցել են նաև Հորդանանի եւ Իրանի հատուկ ծառայությունները: Որոշ վերլուծաբաններ նույնիսկ հակված են կարծելու, թե Ջարկավիի սպանությունն ամերիկա-իրանական հատուկ պայմանավորվածության արդյունք է: Սակայն Իրանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարել է, որ թեև ԻԻՀ-ն «ողջունում» է Ջարկավիի վերացումը, սակայն դա չի նշանակում, թե Իրանն օգնել է ԱՄՆ-ին՝ նրան հայտնաբերելու գործում:

Ջարկավիի մահվանից հետո նրա համախոհներն իրականացրել են վրեժխնդրության գործողություններ: Արդեն շրջանառվում է իրաքյան ալ-Կաիդայի հաջորդ հավանական առաջնորդի անունը՝ Աբու Համզա ալ-Մուհաջիրի:

Իրաքում Ջարկավիի գործունեությունը հանգեցնում էր քառսային վիճակի եւ անիշխանության, իսկ նման պայմաններում որեւէ կառավա-

րությունն ի վիճակի չէ արդյունավետ աշխատել: Պատահական չէ, որ Ջարկավիի ոչնչացումն իրաքյան իշխանություններն ու ամերիկյան օկուպացիոն ուժերը համարում են մեծ նվաճում, ինչը, սակայն, չի նշանակում, թե ահաբեկչությունը երկրում արմատախիլ է արված:

Այս տեսանկյունից ուշագրավ են արեւմտյան մամուլի արձագանքները: Բրիտանական «Գարդիան» թերթի մատնանշմամբ՝ չնայած Ջարկավին սպանված է, սակայն ապստամբական շարժման ավարտի վերաբերյալ հույսերը քիչ են: «Ինդիփենդենթ» եզրահանգմամբ՝ ահաբեկչի սպանությունը երկար սպասված հաջողություն էր, սակայն Իրաքի ապագան շարունակում է մնալ անորոշ: «Թայմսը», նշելով, որ Ջարկավիի մահը կարող է շրջադարձային լինել Իրաքի համար, միաժամանակ, անում է մի հետաքրքիր դիտարկում՝ ընդգծելով, որ դրա հետեւանքներն ավելի շոշափելի կլինեն ոչ թե Իրաքում, այլ ԱՄՆ-ում. ամերիկացիները պետք է որեւէ առաջընթաց արձանագրեն թեկուզ երկարածովոդ եւ հյուժիչ պատերազմում, իսկ Ջարկավիի խաղից դուրս գալն այդ առաջընթացի իրական դրսեւորումն է:

Ջարկավիի սպանությունից ընդամենը մեկ շաբաթ անց, հունիսի 13-ին, անակնկալ այցով Բաղդադ ժամանեց ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը: Ինչպես նշում է ամերիկյան «Նյուսվիք» ամսագիրը, ԱՄՆ նախագահի այցը նախապատրաստվել էր մի քանի շաբաթների ընթացքում:

Բուշի բլից-այցելությունը կազմակերպվել էր խիստ գաղտնի, եւ պատահական չէ, որ այն համեմատում են սառը պատերազմի տարիների նման իրականացվող գաղտնի գործողությունների հետ: Իրաքի վարչապետ Նուրի ալ-Մալիքին Բուշի հետ հանդիպման մասին տեղեկացավ ընդամենը 5 րոպե առաջ, երբ գտնվում էր Իրաքում ԱՄՆ դեսպանատանը: Նրա զրույցն ԱՄՆ նախագահի հետ ընթացել է ոչ անմիջական, այլ հեռուստապատկերի միջոցով:

Ջ.Բուշը Բաղդադում հանդիպել է նաեւ իրաքյան առանձին պաշտոնատարների եւ քաղաքական գործիչների հետ, որոնց մանրամասները հայտնի չեն, ինչպես նաեւ այցելել է ամերիկյան ռազմական բազաներ: Իրաք կատարած նրա այցի անվտանգության ապահովմանը մասնակցել են ավելի քան 40 հազար ամերիկացի եւ իրաքցի զինծառայողներ:

Միջազգային լրատվամիջոցները եւ մի շարք փորձագետներ Բուշի անակնկալ եւ արդեն երկրորդ այցելությունը Բաղդադ դիտարկեցին իբրեւ PR քայլ, ինչը մատնանշում է իրաքյան պատերազմի հատուկ նշանակությունը Բուշի վարչակարգի համար: Բացի այդ, Բաղդադ կատարած այցելությամբ ԱՄՆ նախագահը փորձեց ի ցույց դնել իր աջակցությունն Իրաքի իշխանություններին:

Բուշի այցից հետո վերջնականորեն ձեւավորվեց դեռեւս մայիսին կազմավորվող Իրաքի նոր կառավարությունը: Նոր կառավարության ձեւավորումն, անշուշտ, կարելուք քայլ է իրաքյան քաղաքական կյանքում: Դրա նշանակությունը, սակայն, չպետք է գերազնահատել, քանի որ Իրաքում ներքաղաքական իրավիճակը մնում է լարված եւ անկայուն: Շարունակվում են տարածայնությունները երկրի առաջատար քաղաքական ուժերի միջեւ, ինչը հազիվ թե հնարավոր լինի կարգավորել մոտ ապագայում: Տնտեսական իրավիճակը նույնպես շարունակվում է մնալ բարդ, մեծ չափերի է հասնում կոռուպցիան:

Երկրում չկա ուժեղ իշխանություն, թույլ է անվտանգության համակարգը: Ներկայիս իրաքյան բանակը մարտունակ չէ: Թե՛ սպառազինության, թե՛ բարոյահոգեբանական տեսանկյունից բանակը վատ վիճակում է: Առանց աներիկյան զինված ուժերի աջակցության այն չի կարող որեւէ ինքնուրույն ռազմական գործողություն իրականացնել: Դրա համար, հավանաբար, կպահանջվի եւս մի քանի տարի: Բանակում տարածված է թմրամոլությունը, մեծ է դասալքության ցուցանիշը:

Իրաքում ահաբեկչության ալիքը չի թուլանում: Մահացության դեպքերը հիմնականում պայթյունների հետեւանքով են: Օտարերկրյա օկուպացիայի դեմ պայքարող ապստամբների ընդհանուր թիվը հաշվվում է 12-20 հազար, իսկ բնակչության շուրջ 150 հազարը այս կամ այն կերպ աջակցում է նրանց: Իրաքում գործող օտարերկրյա գրոհայինների թիվը հաշվվում է 3-3,5 հազար: Դրանք հիմնականում Ալժիրի, Սիրիայի, Սուդանի, Եմենի, Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի քաղաքացիներ են:

Երկրում գործում են բազմաթիվ զինված հանցագործ խմբավորումներ, շարունակվում են առեւանգման դեպքերը: Իրենց համախոհներին փրկելու համար՝ շատացել են ոստիկանական կառույցների վրա հարձակումները: Բրիտանական տվյալների համաձայն՝ Իրաքում զինված խմբավորումները հնարավոր կլինի վերացնել միայն 5-10 տարի հետո:

Սուննի-շիա հակամարտությունից բացի, կան նաեւ ներդավանական հակասություններ: Ասվածի ապացույցն է երկրի հարավում ընկած Բասրա քաղաքը, որտեղ գործում են շիական տարբեր կրոնա-քաղաքական զինված կառույցներ, որոնք պայքարում են ազդեցության ոլորտների համար: Դրանցից առավել ազդեցիկ են Իրաքում իսլամական հեղափոխության բարձրագույն խորհրդի զինված թեւը՝ «Բադրի բիրգադը» եւ արմատական հոգեւորական գործիչ Մուկթադա Սադրի «Մահդիի բանակը»:

Երկրում մեծացել են արտագաղթի տեմպերը, ինչն առավել ակնհայտ է ունենուր շրջաններում: Իրաքցիները մեծ հոսքերով տեղափոխվում են հատկապես հարեւան Սիրիա եւ Իրան:

Իրաքյան քառսի պատճառներից մեկն էլ այն է, որ քաղաքական դաշտում դեռեւս չկա որեւէ ազդեցիկ եւ խարիզմատիկ գործիչ, որը կարողանա ղեկավարել երկիրը նման բարդ պատմական ժամանակահատվածում:

Կենտրոնական իշխանության թուլացման արդյունքում իրաքյան քրդերը ձգտում են ամրապնդել իրենց դիրքերն ու համախմբվել: Մայիսի 7-ին Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանը հաստատեց Քուրդիստանի միացյալ տարածաշրջանային կառավարության կազմը: Սկսված է քրդական երկու իշխանական կառույցների (Էրբիլի ու Սուլեյմանիեի) սերտաճումը:

Բացի քրդական անջատողականության իրական վտանգից, Իրաքի օկուպացիան ծնում է «քառսային այլ հեռանկարներ» եւս: Չի բացառվում «շիական դաշինքի» ստեղծումը, որը կարող է միավորել Իրաքի եւ Սաուդյան Արաբիայի շիական շրջաններն ու Իրանը: Իսկ շիական միացյալ այդ շրջանը վերահսկում է նավթի համաշխարհային պաշարների մեծ մասը:

Այսօր արդեն ակնհայտ է, որ Իրաքում կռալիցիոն ուժերը մեծ փորձությունների մեջ են հայտնվել: Այս մասին խոստովանում են նաեւ Վաշինգտոնն ու Լոնդոնը: Նշվում է, թե Իրաքում ներկա ծանր իրավիճակը շատ բաներով պայմանավորված է կռալիցիոն ուժերի սխալներով: Սակայն փաստ է, որ ո՛չ ԱՄՆ-ը եւ ո՛չ էլ Մեծ Բրիտանիան չեն պատրաստվում դուրս բերել զորքերն Իրաքից, քանի դեռ իրաքյան նոր կառավարությունն ի վիճակ չէ երկիրն ինքնուրույն ղեկավարել:

Իրաքի օկուպացիայով ԱՄՆ-ը ցանկանում էր ստեղծել իր համար կառավարելի, որոշակի շրջանակներում անկախ եւ դեմոկրատական երկիր, ինչին, փաստորեն, հնարավոր չեղավ հասնել: Փոխարենը ի հայտ եկավ մի երկիր, որը լիարժեք չի հսկվում ո՛չ օկուպացիոն ուժերի, ո՛չ տեղական իշխանությունների կողմից: Այն կարծես դարձել է ամերիկյան նոր տեսակի զենքերի փորձարկման դաշտ եւ սպառնում է տարածաշրջանային պատերազմի պատճառ դառնալ:

Իրաքյան պատերազմը մեծ վնաս հասցրեց աշխարհում ԱՄՆ վարկանիշին: Մարտի 31-ից մինչեւ մայիսի 14-ը «Pew Research Group»-ի 15 երկրներում անցկացրած հարցախույզի տվյալները ցույց են տալիս, որ ոչ միայն իսլամական, այլեւ եվրոպական երկրների բնակչության մեծ մասն ԱՄՆ քաղաքականությունն Իրաքում ավելի մեծ

սպառնալիք է համարում, քան Իրանի միջուկային ծրագիրը: 14 երկրներից 10-ի հարցվածների մեծ մասի կարծիքով՝ իրաքյան պատերազմն աշխարհը դարձրեց ավելի անապահով եւ անկանխատեսելի: Մեծ Բրիտանիայում այս կարծիքին է հարցվածների 60 տոկոսը: Վաշինգտոնի իրաքյան քաղաքականությունից դժգոհ է ամերիկացիների 65 տոկոսը: Ուշագրավ է, որ աննախադեպ ձեւով կրճատվել է բանակում ծառայել ցանկացող ամերիկացիների թիվը:

Իրաքյան պատերազմի երեք տարիներն արմատապես փոխեցին իրավիճակը ոչ միայն Մերձավոր Արեւելքում, այլեւ ողջ աշխարհում: Այն լրացուցիչ ազդակ եղավ արմատականության եւ ահաբեկչության ակտիվացման համար Ասիայում, Աֆրիկայում եւ Եվրոպայում:

ԻՐԱՆ. ՀՆԱՐԱՎՈՐ ՌՄԲԱՀԱՐՈՒՄ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ՎԼԱՊԻՄԻՐ ՎԱՆԻՆ

Ինչպես նշում են որոշ վերլուծաբաններ, Մեծ Մերձավոր Արևելքում նոր պատերազմի նախապատրաստությունն անշեղորեն մոտենում է անշրջելիության կետին: Դրա վկայություններից է Միջազգային հարաբերությունների Չիկագոյի խորհրդում ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսի վերջերս ունեցած ելույթը: Ամերիկյան արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը հարկ համարեց լսարանի ուշադրությունը հրավիրել այն փաստին, որ Վաշինգտոնը ո՛չ Բալկաններում, ո՛չ էլ Իրաքում մարտական գործողությունների անցկացման համար ՄԱԿ Անվտանգության խորհրդի թույլտվությունը չունեն:

Միացյալ Նահանգների սույն ռազմական գործողությունները տիկին Ռայսը որակեց որպես «ինքնապաշտպանության իրավունք», որի իրականացման համար «Անվտանգության խորհրդի բանաձեւի ստացման անհրաժեշտություն չկա»: Ու թեեւ, պետքարտուղարի խոսքերով, ԱՄՆ-ը «պատրաստ է կիրառել իր տնօրինության տակ գտնվող քաղաքական, տնտեսական եւ այլ միջոցներ», որպեսզի համոզի Իրանին՝ հրաժարվել միջուկային նյութերի ստացման «իր ընտրած ուղուց», սակայն անհրաժեշտության դեպքում Ամերիկան կարող է ինքնուրույն կամ դաշնակիցների հետ միասին ռազմական ուժ օգտագործել:

Միայն օդուժի միջոցով

Մի շարք ամերիկյան փորձագետներ հակված են այն կարծիքին, թե Իրանին հարվածներ կհասցնեն վեց օդային խմբեր: Գործողությունները կարող են ընթանալ միաժամանակ կամ փուլերով՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

Առաջին խմբի մեջ մտնելու են Իրաքում տեղակայված չորս կործանիչ-մթափայտիչներ: Նրանք զինված են լինելու քսան թեւավոր հրթիռներով եւ գրոհելու են Թավրիզի միջուկային օբյեկտները, ինչպես նաեւ նրանից 80կմ հեռու տեղակայված Գյուղատնտեսությունում ստոմային էներգիայի կիրառման հետազոտական կենտրոնը:

Իրաքի տարածքից օդ են բարձրանալու 15 կործանիչ-մթափայտիչներ՝ 60 թեւավոր հրթիռներով (երկրորդ խումբ): Այս խումբը Կասպից ծովի ջրային տարածքից Ղազվին, Չալուս, Նեքա, Քերեջ քաղաքների (բոլորն

էլ գտնվում են Իրանի մայրաքաղաքից հյուսիս-արեւմուտք) միջուկային օբյեկտների եւ Թեհրանի Միջուկային հետազոտությունների կենտրոնի վրա արձակելու է թեւավոր հրթիռներ: Բացի այդ, այս օբյեկտներին թեւավոր հրթիռներով կարող են հարվածներ հասցվել Պարսից ծոցում գտնվող ԱՄՆ վերջրյա ռազմանավերից:

32 թեւավոր հրթիռներով զինված՝ ութ կործանիչ-նմբակոծիչներից բաղկացած երրորդ խումբը, թռչելով Իրաքի օդակայանից, այնուհետեւ բաժանվելու է երկու ենթախմբի: Փորձագետների կարծիքով, դրանցից մեկն իր թեւավոր հրթիռներն ուղղելու է Արաքի ծանր ջրի արտադրության գործարանի եւ Սպահանի երկու միջուկային օբյեկտների վրա (այսպես կոչված ստենդային միջուկային ռեակտորի, որի հատկությունները թույլ են տալիս իրականացնել միջուկի տրոհման կառավարվող շղթայական ռեակցիա, եւ կոնվերսիոն գործարանի, որն ուրանի հում խտանյութը վերածում է ֆտորական ուրանի՝ հետագա հարստացման համար):

Այդ ենթախումբը պետք է ոչնչացնի նաեւ Սպահանի համալսարանը, որի լաբորատորիաներում գտնվում է մեծ քանակությամբ սարքավորում՝ միջուկային փորձարկումների անցկացման համար: Երկրորդ ենթախմբի թիրախներն են՝ Նաթանգի ուրանի հարստացման համալիրը, Սահանդի շրջակայքում գտնվող ուրանի հանքավայրը, Յազդի մերձակայքի ուրանի հանքաշերտերն ու միջուկային ենթակառուցվածքը:

Փորձագետները չեն բացառում, որ Նաթանգի օբյեկտներին հարվածներ կհասցվեն ԱՄՆ ռազմաօդային ուժերի B1-B, B2-A կամ B-52 ռմբակոծիչներով: Այս դեպքում կնետվեն թափանցող ռումբեր՝ ընդունակ ավերելու գետնում խորունկ թաղված բետոնե շինությունները, ապա ստորգետնյա օբյեկտների լիովին ոչնչացման համար գործի կդրվեն GBU-43/B գերիզոր ոչ միջուկային ռումբերը: Նման ռումբի երկարությունը 9 մ-ից ավելին է, իսկ քաշը՝ գրեթե 10 տոննա:

Փորձագետները հաստատում են, որ Աֆղանստանում տեղակայված չորրորդ խմբի (վեց կործանիչ-նմբակոծիչ՝ 24 թեւավոր հրթիռներով) առջեւ խնդիր է դրված երկրի երեսից ջնջել Թաբասից ոչ հեռու գտնվող միջուկային օբյեկտը: Միաժամանակ, ծովային օդուժի 20 ինքնաթիռներից բաղկացած հինգերորդ խումբը, մեկնարկելով Պարսից ծոցի ջրերում նավարկող ավիակրի տախտակամածից, կարծակի 80 թեւավոր հրթիռ՝ սկզբում Բուշերում կառուցվող ատոմակայանի, իսկ հետո՝ Ֆասսայի միջուկային հետազոտությունների կենտրոնի վրա: Ընդ որում, չի բացառվում, որ այդ խումբը նույնպես կարող է բաժանվել ու հարվածներ հասցնել երկու օբյեկտներին միաժամանակ:

Փորձագետները ենթադրում են, որ վեցերորդ խմբի կազմում կմտնեն 10-ից 20 B1-B կամ B2-A ռմբակոծիչներ (լիովին հնարավոր է, որ այս երկու տիպի անտեսանելի ինքնաթիռներն էլ մասնակցեն գործողությանը): Այս մեքենաներն ընդունակ են իրենց վրա կրել մինչև 20տ ռումբ, այդ թվում՝ երկրի մակերեսից զգալի խորության վրա գտնվող, առանձնապես անուր շինությունները խորտակելու համար նախատեսված ռումբեր: Ինքնաթիռներն օդ կբարձրանան Քաթարի օդակայաններից եւ կռմբահարեն Իրանի ստորգետնյա միջուկային օբյեկտները:

Փորձագետները գտնում են, որ հակաիրանյան գործողությանը, հնարավոր է, ներգրավվեն ատոմային սուզանավեր եւ, մասնավորապես, արդիականացված հակասուզանավային «Օհայո» ավիակիրը՝ 150 թեւավոր հրթիռներով:

Փորձագետները հնարավոր են համարում, որ Իրանին կարող են հասցվել եւ միջուկային հարվածներ: Դա անուղղակիորեն հաստատեց նաեւ Ամերիկայի նախագահը. լրագրողների հետ վերջերս կայացած զրույցներից մեկում Ջորջ Բուշը շեշտեց, թե պատրաստ է օգտագործել «ցանկացած միջոց», որպեսզի թույլ չտա Իրանին՝ տիրապետել միջուկային զենքի:

Արդյունքում ինչ է ստացվելու

Նման ռմբահարումներից հետո Իրանից տարիներ կպահանջվեն՝ վերակենդանացնելու իր միջուկային ծրագիրը, որի համար անհրաժեշտ կլինեն միլիարդավոր դոլարներ: Սակայն որոշ փորձագետներ գտնում են, որ ամերիկացիներին չի հաջողվի ոչնչացնել Իրանի ողջ միջուկային զինանոցը, եւ այդ ժամանակ, վատագույն դեպքում, Թեհրանի միջուկային ծրագիրը կդանդաղի 10 տարուց ոչ ավելի: Սակայն առանձին վերլուծաբաններ համարում են, որ իրանական միջուկային օբյեկտներին հարվածները պետք է կես տարին մեկ կրկնվեն: Դա անհրաժեշտ է, որպեսզի դրանց վերականգնման համար Թեհրանին ժամանակ չմնա:

Եիշտ է, փորձագետները դժվարանում են Թեհրանի դեմ ռազմական ուժի կիրառման դեպքում նրա պատասխան գործողությունների հետ կապված որեւէ կանխագուշակում անել, սակայն միահամուռ կերպով համոզմունք են հայտնում, որ ԱՄՆ եւ իր դաշնակիցների շահերը, որոնք մտադրված կլինեն մասնակցել հակաիրանյան ռազմական գործողություններին, կարող են լրջորեն վնասվել: Այս կապակցությամբ չի կարելի ուշադրություն չդարձնել Իսրայելի բանակային հետախու-

զության պետ, գեներալ-մայոր Անոս Յաղիհնի այն հայտարարությանը, թե Հյուսիսային Կորեայից Թեհրանը գնել է 2,5 հազար կմ գործողության շառավղով «ցամաք-ցամաք» դասի հրթիռներ՝ ընդունակ հասնելու ոչ միայն հրեական պետության, այլև մի շարք եվրոպական երկրների տարածքները: Յաղիհնը հավաստում է, որ այդ բալիստիկ հրթիռների որոշ խմբաքանակ արդեն հասցվել է Իրան:

Միաժամանակ, եթե Իրանը դիմի հակագործողությունների, դա Վաշինգտոնի համար իսլամական հանրապետության վրա գրոհները շարունակելու արդարացուն կհանդիսանա, իսկ նոր ռմբահարումների թիրախ կդառնան ոչ միայն միջուկային օբյեկտները, այլև զինուժը՝ առաջին հերթին, բալիստիկ հրթիռների արձակման կայանքներն ու հակաօդային պաշտպանության միջոցները: Օդային հարձակումների կենթարկվեն պետական հիմնարկները, որպեսզի ոչնչացվի երկրի կառավարման համակարգը եւ ապակայունացվի ներքին իրադրությունը:

Փորձագետները խոսում են այն մասին, որ եթե ԱՄՆ-ը որոշի դիմել այաթոլաների վարչակարգի վրա ճնշում գործադրելու ուժային մեթոդին, ապա նա Իրանում ավելի «կխրվի», քան Իրաքում: Դեռ ավելին. կարծիքներ կան, որ այն կհանգեցնի ՆԱՏՕ-ում որոշակի պառակտման, ահաբեկչական գործողությունների հերթական ալիքի եւ Մեծ Մերձավոր Արեւելքի տարածաշրջանում իրավիճակի անկանխատեսելի ապակայունացման:

«Независимое военное обозрение»

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մուշեղ Լալայան

**«ԱՅՆ, ԻՆՉ ՈՒՂԴՎԱԾ Է ԱԶԳԱՅԻՆԻ ԴԵՄ,
ՈՒՂԴՎԱԾ Է ՍԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ» 1**

Սարգիս Հարությունյան

**ՂԱՐԱՔԱԴՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ.
ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 8**

Գագիկ Տեր-Հարությունյան

**ԱՇԽԱՐՀԱՔԱԴԱՔԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄՆԵՐ.
ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄ 13**

Գոհար Իսկանդարյան

**ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԻՐԱՆՈՒՄ
ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ 20**

Սուրեն Սարյան

«ՀԻՆ» ԵՎ «ՆՈՐ» ԵՎՐՈՊԱՆԵՐԸ 25

Սուրեն Մանուկյան

**ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԸ ԱՐԵՎՍՈՒՏՔԻ ԱՉՔԵՐՈՎ.
ԿԵՐՊԱՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ 32**

Արաքս Փաշայան

ԻՐԱՔ. ԱՆՈՐՈՇ ԱՊԱԳԱ 36

Վլադիմիր Վանին

ԻՐԱՆ. ՀՆԱՐԱՎՈՐ ՌՄՔԱՀԱՐՈՒՄ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ 41

*Շապիկի վրա պատկերված են
Վանա լիճը եւ Աղթամար կղզին*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՄ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: